

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԹԱՐԽԱՆԻ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԸ ԵՎ «ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Պաշտոնական ընդդիմախոսներ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Հովհաննիսյան Ն. Հ.

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մովսիսյան Ֆ. Վ.

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գևորգյան Հ. Մ.

Առաջատար կազմակերպություն Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2015 թ. դեկտեմբերի 22-ին ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղնագիրն առաքված է 2015 թ. նոյեմբերի 21-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պ. գ. թ., դոցենտ

Սուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Թեմայի արդիականությունը. Մկրտիչ Փորթուզայան մտավորականի ու քաղաքական գործչի բազմամյա հայրենավեր գործունեության պատմության ու նրա կողմից հիմնած «Արմենիա» թերթի հայ քաղաքական կյանքում ու հասարակական մտքի անդաստանում ունեցած կարևոր դերակատարության ուսումնասիրությունը մեր օրերում ունի ոչ միայն գիտա-ճանաչողական, այլև արդիական-քաղաքական նշանակություն: Նախ՝ Մ. Փորթուզայանն ու «Արմենիա»-ն եվրոպական միջավայրում հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը տարածելով՝ եվրոպայի հայության և եվրոպական հասարակությունների միջև առաջին գաղափարական կամրջողները դարձան: Եվ հետո՝ նրանք նոր մակարդակի բարձրացին հայ քաղաքական մտքի պատմությունը:

Ինչպես XIX դարի վերջին քառորդի ու XX դարի առաջին տասնամյակների, այնպես էլ արդի հայ քաղաքական շարժումների ու հասարակական մտքի համար խիստ կարևոր ու սկզբունքային նշանակություն ունի սեփական դիրքորոշումների ու քայլերի հայաստանակենտրոն մեկնակետի հստակեցումը: Ներկայումս, ինչպես և 100 տարի առաջ, դա պահանջում էր ապագային միտված ազգային-քաղաքական ծրագրերը կառուցել հայրենաբնակ հայության շահերի առաջնության հաշվառման սկզբունքի վրա, որը համահունչ է նաև անվտանգության համագաղափար տեսլականին: Ուստի՝ «Արմենիայի» ու նրա խմբագրի հայաստանակենտրոն մտածողության լավագույն ավանդույթների հաշվառումը իրատեսական քաղաքականության որդեգրման կարևոր պայման է նաև՝ Հայաստանի երրորդ Հանրապետության պետական, քաղաքական ուժերի ու անհատ գործիչների համար:

Մ. Փորթուզայանի ու «Արմենիա» թերթի գաղափարա-քաղաքական ժառանգության մեջ խիստ արդիական է նաև այն, որ «Արմենիան» ու նրա խմբագիրը դարձան հայրենիքի ազատագրության համար սեփական ուժերին ապավինելու, տարիների աշխատանքի միջոցով «ներքին ուժ» ձևավորելու գաղափար-սկզբունքների ամենահետևողական քարոզիչներից մեկը: Հենց այդ մտայնությունն էլ հետագայում հայ ազատամարտի հաջողությունների բանալի դարձավ: Նույն գաղափարախոսությունը ուղեկցեց նաև Արցախի գոյամարտի ու Հայաստանի երրորդ հանրապետության կայացման գործում և կարող է դիտվել նաև իբրև Ղարաբաղյան պատերազմից անցած երկու տասնամյակներում մեր գործողությունների ու քաղաքական դիրքորոշումների գնահատման յուրօրինակ չափանիշ: Գաղտնիք չէ նաև, որ ապագային միտված ճշգրիտ ծրագրեր ունենալու և հստակ գործելու անհրաժեշտությունը պարտադրում է պատմության ամբողջական ու անսխալ իմացություն, ինչը հնարավորություն կտա անցյալի սխալներից դասեր քաղել և առաջ ընթանալ հավասարակշռված ու հաստատուն քայլերով: Մեր օրերում կանգնելով նոր փորձությունների հանդիման պարտավոր ենք նաև ինքներս մեզ հարց տալ. արդյո՞ք ռացիոնալ կերպով ենք օգտագործել անկախության տարիները:

«Արմենիա» թերթի ինքնատիպ գաղափարաբանությունը կարող է կարևոր դեր խաղալ նաև մեր օրերում լայն տարածում գտած օտարամուտ քաղաքական շարժումների ու գաղափարական հոսանքների հանդեպ ճշգրիտ ու առարկայական դիրքորոշումներ որդեգրելու և նրանց բերած աշխարհաքաղաքա-ցիական հովերից ազգային նվիրական նպատակները պաշտպանելու գործում,

ինչն ամենևին էլ չի բացառում ազգային ու համամարդկային արժեքների համադրության ու սինթեզի անհրաժեշտությունը:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները. Գիտականորեն լուսաբանված հիմնահարցերի ներկայացված շարադրանքի հիման վրա կարող ենք արձանագրել, որ սույն հետազոտության գլխավոր նպատակն է «Արմենիա» թերթում առկա հրապարակումների, արխիվային նորահայտ փաստերի, տպագիր սկզբնաղբյուրների, հուշագրությունների, պարբերական մամուլի ու հիմնահարցը ներառող գիտական գրականության համակողմանի հետազոտման հենքով և ապաքաղաքական մոտեցմամբ, ներկայացնել հայ քաղաքական մամուլի առաջնել, 1885 -1923 թթ. Մարսել քաղաքում Մ. Փորթուգալյանի խմբագրությամբ¹ լույս տեսած «Արմենիա» թերթի ամբողջական պատմությունը:

Ըստ ամենայնի արժևորել ենք հետազոտվող խնդրից նվիրված արխիվային վավերագրերն ու տպագիր սկզբնաղբյուրները, հուշագրություններն ու ուսումնասիրությունները, շեշտադրել այն հարցերը, որոնք մեր կարծիքով ցայսօր անբավարար են լուսաբանված պատմագիտական գրականության մեջ: Ուսումնասիրության առարկայի խորությամբ հետազոտման նպատակով, գլխավորապես «Արմենիա» թերթում տպագրված նյութերի հենքի վրա համակարգային վերլուծության ենք ենթարկել և լուսաբանել մի ամբողջ խումբ իրար շաղկապված և միմյանց փոխպայմանավորող հիմնահարցեր: Դրանք են՝

- 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայության հանընդհանուր հիասթափությունը մեծ տերություններից ու ազատության հասնելուն որպես նախապայման՝ սեփական ուժին կոթնելու մտայնության աստիճանական կարևորումը,
- XIX դարավերջի և XX դարասկզբի առաջին քառորդի Արևմտյան Հայաստանում տիրող ծանր կացությունը,
- ստեղծված իրավիճակի օրգանական շարունակություն եղող ազատագրական գաղափարաբանության ծնունդը,
- ազատագրական գաղափարաբանության ակունքներում կանգնած, կրթալուսավորական գործունեությամբ աչքի ընկած, հետո էլ երկրից արքորված և հայ կյանքի տարեգիր ու ազատության մուսնետիկ «Արմենիա» թերթը հիմնադրած ու միայն մասնակի ուսումնասիրված Մ. Փորթուգալյանի հայրենավեր գործունեությունը,
- Մ.Փորթուգալյան-«Արմենիա»-Արմենական կուսակցություն առնչությունների կնճռոտ խնդրի լուսաբանումը,
- արևմտահայության ազատագրության խնդիրներին և Արևմտյան Հայաստանի քաղաքական կարգավիճակի հնարավոր փոփոխության վերաբերյալ Մ. Փորթուգալյանի աշխարհայացքային մոտեցումների լուսաբանումը,
- հայ ազգային կուսակցությունների և մեծ տերությունների դիրքորոշումների նկատմամբ թերթի վերաբերմունքը,
- հայ իրականության և հանրային կյանքում գոյություն ունեցող թերությունները,
- 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը և դրա հետևանքով իրավիճակային նոր փոփոխությունները,

¹ Մ. Փորթուգալյանի վախճանվելուց հետո՝ 1921-1923 թթ. թերթը խմբագրել է Եղիշե Թորոսյանը:

- Հայկական հարցին, հայոց Մեծ եղեռնին, կամավորական շարժմանը, «Բաց ու գոցի» խնդրին, Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակմանը «Արմենիա» թերթի մոտեցումների լուսաբանումը և մի շարք այլ կարևոր հարցեր:

Աշխատանքում առանձնահատուկ շեշտադրում է կատարվել «Արմենիա» թերթի առաջին տասնամյակի համարներին, երբ այն նոր «գաղափարների շտեմարան» էր և բոլոր հրապարակումները տողորված էին ազատախոհությամբ, պայքարի ոգով և ապագայի նկատմամբ լուսավոր հավատով:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները.

Ատենախոսությունն ընդգրկում է հիմնահարցի տեսակետից ուղեմիջային իրադարձություններով որոշակիացված ժամանակահատված՝ 1885 -1923 թթ., այսինքն՝ «Արմենիա» թերթի լույս ընծայման բոլոր տարիները: Նշված ժամանակագրական հենքի վրա էլ քննարկվում են հայ կյանքում տեղի ունեցած իրադարձությունների և հասարակական մտքի դիրքորոշումների վերաբերյալ թերթի լուսաբանություններն ու տեսակետները: Հիմնահարցի ամբողջական և խորքային լուսաբանման անհրաժեշտությունից ելնելով՝ հակիրճ անդրադարձել ենք թերթի լույս ընծայմանը նախորդող տարիների մի քանի կարևոր իրադարձությունների: Մասնավորապես՝ ներկայացրել ենք 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանում ստեղծված սոցիալ-քաղաքական ծանր կացությունը: Վախենալով հայ ստեղծ էլ տարածքային կորուստներ ունենալուց ու, հատկապես հայ ժողովրդին անբարեխույս համարելով՝ իշխանությունները որդեգրեցին բռնաճնշումների քաղաքականություն: Որպես դրա անմիջական հետևանք ու պատասխան՝ հայ ժողովուրդը ոտքի ելավ ազատագրական պայքարի, որն սկզբում ծավալվեց կրթալուսավորական շարժման տեսքով: Այդ գործում նշանակալի դերակատարություն ունեցավ Մ. Փորթուգալյանը, ով խուսափելով ձերբակալությունից՝ հեռացավ երկրից և 1885 թ. Մարսելում սկսեց հրատարակել «Արմենիա» թերթը:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը.

Հետազոտության մեթոդաբանական հիմքում մեր կողմից ուսումնասիրված աղբյուրների և գիտական գրականության համեմատական ուսումնասիրությունն է: Հետազոտությունում շարադրամքի հաջորդականությունը պայմանավորված է ժամանակագրական և թեմատիկ սկզբունքով: Ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռել շատ դեպքերում նորովի լուսաբանել բազմաթիվ հիմնախնդիրներ և որոշակի առաջարկություններով նպաստել դրանց արդյունավետ ընկալմանը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած է «Արմենիա» թերթի պատմության և նրանում առկա կարևորագույն հրապարակումների անկողմնակալ ու անաչառ հետազոտության սկզբունքը:

Ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը.

Ընդհանրացնելով ատենախոսությունում լուսաբանված պատմագիտական նորույթ հանդիսացող հիմնախնդիրների հնարավորինս համառոտ ներկայացումը՝ կարող ենք որոշակիորեն արձանագրել, որ հետազոտության հիմնական անվիճելի գիտական նորույթը վաստակաշատ մտավորական Մ. Փորթուգալյանի կյանքի, հասարակական-քաղաքական գործունեության և դրա զարդապսակ «Արմենիա» թերթի պատմության հնարավորինս ամբողջական, համակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, որը կատարվում է առաջին անգամ: Ատենախոսությունում հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակությամբ բացառիկ գործընթացները ներկայացված են համաշխարհային պատմության կարևորագույն

իրադարձությունների անմիջական առնչությունների խորապատկերում և «Արմենիա» թերթի՝ որպես այդ իրողությունների հայելի ու տարեգիր, արձագանքների և արտահայտած տեսակետների հուլվույթով: Ուսումնասիրության նորույթն ամփոփ ձևով ունի հետևյալ տեսքը.

ա) առաջին անգամ ներկայացվում է Սկրտիչ Փորթուզալանի կյանքն ու գործունեությունը և «Արմենիա» թերթի ամբողջական պատմությունը:

բ) վերլուծվում են «Արմենիա» թերթում տեղ գտած կարևորագույն հրապարակումները և այդ հենքի վրա համոզվելը ցույց տրվում, որ պարբերականը արևմտահայ կյանքի տարեգիրն էր, իրականության անեղծ հայելին,

դ) լուսաբանվում և շրջանառության մեջ են դրվում նոր տեղեկություններ ու փաստեր թերթի սկզբնավորման, գործելակերպի հիմնական ուղղությունների և օսմանյան բռնատիրության դեմ պայքարի մեթոդների և ձևերի մասին,

ե) եվրոպական հասարակությանը հայոց խնդիրն տեղեկացնելու և նրանց օգնությանն ապավինելու ակնկալիքով թերթի ծավալած տեղեկատվական աշխատանքները լուսաբանվում են առաջին անգամ,

զ) հիմնավորվում է հայ ազատագրական պայքարը եվրոպայից կախյալ համարելու ռազմավարության սխալ ու անարդյունավետ լինելու տեսակետը,

է) ներկայացվում է Հայկական հարցի վերաբացման իրողությունը և մանրամասն քննարկվում նրա լուծման տարբերակներն ըստ թերթի նյութերի,

ը) լուսաբանվում են Հայկական հարցը թուրքավարի՝ ցեղասպանության միջոցով լուծելու և այն օրակարգից հանելու օսմանյան իշխանությունների կանխակալ ծրագրերը,

թ) Հայաստանի անկախության և խորհրդային շրջանի առաջին տարիները, թուրք-հայկական հարաբերությունները, որոշ պայմանագրեր և այլ ռազմաքաղական իրադարձություններ լուսաբանվել են թերթի հրապարակումների հենքի վրա:

Ատենախոսությունն ունի ոչ միայն գիտական, այլև կրառական նշանակություն: Անժխտելի է, որ աշխարհի ու մարդկության «Պարույրած» զարգացման տեսությունը հայ ժողովրդի պատմության դեպքում քննություն է բռնում: Յետևապես, այդ հենքի վրա կատարված վերլուծությունների արդյունքում կատարված եզրահանգումները Հայաստանի անկախ պետականության կայացման գործընթացի շարունակականության պայմաններում, ձեռք են բերում գործնական նշանակություն, հատկապես՝ անցյալում թույլ տրված սխալները հասկանալու և դրանք կրկնելուց զերծ մնալու առումով: Աշխատությունն ունի նաև պատմա-ճանաչողական կարևոր նշանակություն, քանզի կարծում ենք, որ հետազոտության արդյունքները պահանջված են հայ ժողովրդի նոր շրջանի պատմության, մասնավորապես՝ քաղաքական մամուլի, ազգային կուսակցությունների, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության, սեփական ժողովրդի ազատության պայքարի նվիրյալների վերաբերող հարցերն ուսումնասիրողների կողմից: Դրանք կարող են օգտագործվել նաև բուհական ու դպրոցական դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ շարադրելիս կամ դասավանդելու ընթացքում:

Ուսումնասիրության փորձաքննությունը. Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել նույն ինստիտուտի Նոր պատմության բաժնի նիստում:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են հայերեն և ռուսերեն մեծագրություններ, հոդվածներ հայրենի և արտասահմանյան գիտական պարբերականներում, կարդացվել զեկուցումներ գիտական նստաշրջաններում:

Յետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը. Աշխատությունում խնդրո առարկա հիմնահարցերը լուսաբանվել են «Արմենիա»-ում լույս տեսած հոդվածների, արխիվային նյութերի, տպագիր սկզբնաղբյուրների, հուշագրությունների, մամուլի հրատարակումների և հետազոտությունում արծարծված այլ հարցերին վերաբերող գիտական գրականության հիման վրա:

Թեմայի գիտական լուսաբանման համար բացառիկ կարևորություն ունեն «Արմենիա»-ում հրատարակված նյութերը, հատկապես՝ Մ. Փորթուզայանի հեղինակած ծրագրային բնույթի խմբագրականները², քանի որ «Արմենիա»-ի ու Մ. Փորթուզայանի վերաբերյալ արխիվային վավերագրերն այնքան էլ առատ չեն³: Յետազոտության մեջ օգտագործել ենք նյութեր նաև որոշ էլեկտրոնային կայքերից⁴, ինչպես նաև հիմնահարցին առնչվող փաստագրական վերլուծական հայերեն⁵, ռուսերեն⁶, անգլերեն⁷ և թուրքերեն⁸ ժողովածուներից:

XIX դարի վերջի և XX դարի առաջին տասնամյակների հայոց պատմության իրադարձություններով հարուստ ժամանակահատվածը հաճախ է դարձել ուսումնասիրության առարկա, գրվել են մեծաքանակ և բարձրարժեք պատմագիտական աշխատություններ, որոնք որոշ վերապահումներով, մեզ համար եղել են

² Թերթի որոշ խմբաքանակներ պահվում են ՀՀ Ազգային գրադարանում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում /ԳԱԹ/ և Մ. Մաշտոցի անվան մատենադարանում: Որոշ էլ՝ Թբիլիսիի Ջավահրաշվիլու անվան համալսարանական գրադարանում, որոնք ֆոնդավորված չեն և որպես անմշակ նյութ՝ գրանցված են ԳՏ-58 համարի ներքո: «Արմենիայի» որոշ համարներ էլ գտնվում են Կիեմնայի Մխիթարյան միաբանության գրապահոցներում՝ 1.254. 1.255 և 1.155 համարների ներքո:

³ Արխիվային որոշ վավերագրեր կան Հայաստանի Ազգային արխիվի թիվ 121,190, 408, 420, 424, 427, 453, 1267, ֆոնդերում, ԳԱԹ-ի «Սարգիս Հայկունի», «Արշակ Չոպանյան», «Գարեգին Լևոնյան», «Արփիար Արփիարյան» ֆոնդերում, Հայաստանի պետական պատկերասրահի հուշածնագրային բաժնում: Մի քանի արժեքավոր վավերագրեր էլ ձեռք ենք բերել մեր սփյուռքահայ բարեկամների օգնությամբ:

⁴ Wikipedia.com, Hy wikisource.org, Editions. sigest. Net, www.azator, gr /yushatetr/.

⁵ «Արմենիա»ի յուշարար, Ա տարեկան (1885-86), Մարտեյ, 1890, Հայաստանը բուրժուական դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972, Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Մ. Ներսիսյանի խմբագրությամբ, Ե., 1991, Արմենական կազմակերպութիւն, ՌԱԿ հիմնական ծրագրեր, կանոնագրեր և վավերագրեր, Պեյրուք, 1988, Օրագիր և կանոնագիր Գաղափարակցական միութեան (Արմենո-միութենական միացեալ կազմակերպութիւն), Լոնտոն, 1907, Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց Բարլոյան Ա., 1986, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), Համահավաք ցանկ, կազմեց՝ Ա. Կիրակոսյան, Ե., 1970:

⁶ Армянский вопрос и геноцид армян в Турции 1913-1919, сост. В. Микаелян, Е., 1991, Положение Армян в Турции до вмешательства держав в 1895 г., Москва, Тип. "Рассвет", 1896, Черная Книга, Знаменитые иностранцы о турецких преступлениях конца XIX века и о геноциде армян в Османской империи в 1915 году, составитель А. Исоян, Е., 2012.

⁷ British Documents on the Ottoman Armenians, Ankara, 1989, pp. 547-550, 767 pages.

⁸ Documents Diplomatiques Ottomans: Affaires Armeniennes (ed. by Bilal Şimşir), vol. 1 (1886-1893). Ankara, 1985, 580 pages.

ուղենշային⁹: Ժամանակաշրջանի տարբեր հիմնախնդիրներ բննարկելիս դրանց հեղինակներն անդրադարձել են նաև «Արմենիա» թերթին ու Մ. Փորթուզալյանին: Այդ աշխատությունները պայմանականորեն, բաժանել ենք չորս խմբի՝

ա) նախախորհրդային շրջանում գրված ուսումնասիրություններ,

բ) խորհրդային շրջանում գրված ուսումնասիրություններ,

գ) սփյուռքում գրված ուսումնասիրություններ,

դ) հետխորհրդային շրջանում գրված ուսումնասիրություններ,

Նախախորհրդային շրջանում «Արմենիա» թերթին նվիրված աշխատություն մեզ հայտնի չէ: Սակայն Փորթուզալյանին նվիրված ուսումնասիրություններում¹⁰ կան անդրադարձներ նաև «Արմենիա»-ին: Քննական-վերլուծական բնույթ չունեցող այդ աշխատությունների մեծ մասին բնորոշ է հայ իրականության մեջ ոչ համախառն հանդիպող երևույթ. անկախ հեղինակների կուսակցական պատկանելիությունից՝ դրանցում «Արմենիա»-ի և դրա խմբագրի մասին միայն գովեստի ու գնահատանքի խոսքեր են որոնք հավանաբար պայմանավորված են հորելյանների առիթներով գրված լինելով: Սակայն, կարծում ենք, որ այդպիսի գնահատականների համար պակաս կարևոր դերակատարություն չի ունեցել նաև Մ. Փորթուզալյանի և նրա «Արմենիա»-ի լուրջ ավանդը հայոց գարթոնքի ու ազատագրական պայքարի գաղափարախոսության մշակման գործում:

Առաջիններից մեկը Վանի վարժապետանոցի նախկին սան Պ. Թորոսյանն է, ով անդրադառնալով «Մեծ հայրենասեր» Փորթուզալյանի 40-ամյա գործու-

⁹ **Լեօ**, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հտ. Ա, Ե., 1994, **Ավետիսյան Զ.**, Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997, **Սիմոնյան Զ.**, Անդրանիկի ժամանակը, Ե., 1996, նույնի՝ Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, **Գիւզալեան Գ.**, Պատմական խնդիրներ, Մ. Փորթուզալեան (մի էջ յեղափոխական մտքի պատմությունից), Պեյրուք, 1937, **Ներսիսյան Մ.**, Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնատիրության դեմ, Ե., 2002, **Խառատյան Ա.**, Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, Ե., 1958, **Համբարյան Ա.**, Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, նույնի՝ Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908), Ե., 1999, **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Ե., 1998, **Վարդանյան Զ.**, Արևմտահայերի ազատագրության հարցը և հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Ե., 1967, **Սարուխանյան Ն.**, Հայկական հարցը մինչխորհրդային հասարակական քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Ե., 1997, **Ղազարյան Զ.**, Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Ե., 2001, **Կոչար Մ.**, Արմանո-турецкие общественно-политические отношения и армянский вопрос, Ե., 1988, **Саркисян Е.**, Политика Османского правительства в Западной Армении державы в последней четверти 19-ого и начале 20-ого вв., Ե., 1972, 1967, **Барсегов Ю.**, Геноцид Армян Ответственность Турции и Обязательства мирового сообщества, документы и комментарий, том 1, М., 2002 и том 2, М., 2005 և այլն:

¹⁰ **Թորոսյան Պ.**, Ո՛վ է Սկրտիչ Փորթուզալեան, Կ. Պոլիս, 1912, նույնի՝ Քառասուն տարուան աշխատառորը, Կ. Պոլիս, 1914, **Վարանդեան Մ.**, Հայկական շարժման նախապատմությունը, Գ. 1, Գ. 2, Ժնն, 1912, **Պազլի Խան**, Քառասուն տարի, Կ. Պոլիս, 1914, **Վասիլեան Պ.**, Յոթելեարը եւ Արարատեան ընկերությունը և ուրիշներ, Կ. Պոլիս, 1918, **Սապահ-Գյուլեան Ս.**, Պատասխանատուները, Փրովիտենս, 1916, **Կարապետեան Գ.**, Մօտաւոր անցեալի յիշատակներէն, Կ. Պոլիս, 1919, **Լեօ**, Անցեալից, Թիֆլիս, 1925, նույնի՝ Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանությունը, հատ. Ա, Փարիզ, 1934, **Երամեան Զ.**, Հուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա, Աղեքսանդրիա, 1929: **Ա-Ղո**, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թթ., Ե., 1917:

նեությանը և փորձելով պատասխանել «ո՞վ է Մ. Փորթուզալեանը» հարցին¹¹, բարձր է գնահատել նրա ներդրումը հայությանը կրթելու, համախմբելու և պայքարի կոչելու գործում: Համարելով նրան աննկուն կամքով օժտված «լուսաւորութեան անդրամիկ կամաւոր զինւոր» և հայրենիքին պատած թանձր «խաւարը փարատելու» միջոցներ փնտրող, հեղինակը հատկապէս շեշտում է, որ Փորթուզայանը «վիատուած հայութեան մէջ ինքնավստահութիւն» ներշնչողներից առաջինը եղավ¹²: Ով «40 տարի անընդհատ տքնած է Հայը իւր դարեւոր թմրութենէն սթափեցնել, զարգացած ազգերու շարքը բարձրացնել»¹³ և ում լեզուն երբեք «չկաշառուեցաւ եւ ձեռքը չպղծուեցաւ» և իր աննկուն ու քաջարի կեցվածքով վարակեց շատերին:

Մ. Փորթուզայանի և «Արմենիա» թերթի մասին տեղեկությունների անփոխարինելի աղբյուր է Մ. Փորթուզայանի գործունեության 40-ամյա և «Արմենիայի» հրատարակման 25-ամյա հոբելյանների առթիվ ժամանակի նշանավոր մտավորականների հեղինակած հոդվածների ժողովածուն¹⁴: Հեղինակները¹⁵ մեծարում են նրան «նվիրյալ մանկավարժ», «լայնախոհ հրապարակագիր», «կրթոտ հայրենասեր», «մանուկի երախտավոր» և այլ դրական բնորոշումներով ու ընդգծում, որ նա իր հավատի ուժով հայությանը թաքմ լիցք ներարկեց:

Նախախորհրդային շրջանում զգալի թիվ են կազմում կուսակցական գործիչների հեղինակած աշխատությունները¹⁶: Դրանցում, որպէս շարժման սկզբնավորողի, հիշատակվում են նաև Փորթուզայանն ու նրա «Արմենիա»-ն: Նրանցից ՀՅԴ տեսաբան Միքայել Վարանդյանը, քննարկելով նշված ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության եվրոպականամալու ճիգերը և հայերի վերագաղթունի գործընթացը, համարում է, որ այդ շարժումը ողբից ու հառաչանքից մինչև բողոքի ու պայքարի հրավիրող գործիչները դարձան «այն ժամանակվա հայության խիղճը»¹⁷: Չարգացնելով այդ թեզը՝ Մ. Վարանդյանն այդ սերնդին համարում է ազգային-ազատագրական շարժման «ուժ-զաղափարի», «խթան-զաղափարի» ստեղծիչ¹⁸: Այս որակումներն անկասկած վերաբերում են նաև Մ. Փորթուզայանին:

«Արմենիա» թերթի մասին նախախորհրդային շրջանում զգալի թվով հրապարակումներ կան ժամանակի **մամուլում**: Կ.Պոլսում լույս տեսնող «Աւետաբեր»¹⁹ շաբաթաթերթը «Ո՞վ է Փորթուզալեան» խմբագրականում մեծարում է Մ. Փորթուզայանին «անձնուէր հանրային գործիչ», «բարի յեղափոխական», «երկնառաք հրեշտակ», «առաջինն ում քարոզը կը հասկնար ժողովուրդ», «դարոցի սամբուր ընկեր, բարեկամ» արտահայտություններով, ում

¹¹ **Թորոսեան Պ.**, Ո՞վ է Մկրտիչ Փորթուզալեան, Կ. Պոլիս, 1912:

¹² Նույն տեղում, էջ 9:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Կենսագրական գծեր, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914:

¹⁵ Աշխատանքը չճանրաբեռնելու համար ձեռնպահ ենք մնում բոլոր 23 հեղինակների անուն-ազգանունները թվարկելուց:

¹⁶ **Վարանդեան Մ.**, Հայկական շարժման նախապատմությունը, Ժնև, 1912, Հ 1 և Հ. 2, **ճանկուլեան Հ.**, Յիշատակներ հայկական ճգնաժամին, մաս Ա., Կ.Պոլիս, 1913, **Սապահ-Գյուլեան Ս.**, Պատասխանատուները, Բ. տպագրութիւն, Պեյրուք, 1974 և այլն:

¹⁷ **Վարանդեան Մ.**, Հայկական շարժման նախապատմությունը, Ժնև, 1912, Հ 1, էջ 13:

¹⁸ Նույն տեղում, էջ 14:

¹⁹ «**Աւետաբեր**» Ամերիկյան Միսիոներաց ընկերության պարբերականը լույս է տեսել Կ.Պոլսում 1855-1915 թթ. նախ որպէս երկշաբաթաթերթ, ապա՝ ամսաթերթ: Պարբերականի խմբագիրներ են եղել Ճ. Կոնը, Հ. Պարնըմը, Գ. Մեքալմը, Ե. Պլիսը և ուրիշներ:

խոսքը զուլալ առվակի նման «լուալով հանդերձ սխալ գաղափարներն ու կեղտեր, բարձր խտեղներ դիւրամարս կընէր»: Այնուհետև ընդգծվում է, որ «փառասիրութիւն» բառը նրա մոտ իսպառ բացակայում էր և առանձնացնելով պարզ ու հստակ գրելաձև՝ ներկայացնում, թէ ինչպիսի հմտությամբ էր նա մերժում ընդդիմադիրների հիմնագուրկ պնդումները, իսկ այնուհետև վկայակոչում «Արմենիայի» բանաձևած մի կարևոր դրույթը. «Ոչ մի Հայ իրաւունք ունի ըսելու թէ ինք բան մը չկրնար ընել խեղճ ազգին համար: Մինչև անգամ եթէ արժեք զրօ մը ըլլաս, գոնէ կրնաս 1 արժող Հայ եղբօր մը քով կայնելով՝ 10 շինել»²⁰:

«Ազատ Բեմ» պարբերականն էլ է հեղափոխական առաջին սերնդի ու նրանց գաղափարախոսների մասին հիացմունքով խոսում: Որտեղ խմորվում էին հեղափոխական գաղափարներ, որտեղ մտադրությոն կար զբաղվելու Հայաստանի ազատագրության խնդիրներով, բնավորությամբ մեղմ, մարդասեր Մ. Փորթուզայանն այնտեղ էր: Իսկ Արփիար Արփիարյանի բնորոշմամբ «Փորթուզալեանը ազատութեան շունչ մը փչեց ամբողջ Վանի վրա: Առանց Յեղափոխութիւն բառն արտասանելու յեղափոխական սերունդ մը պատրաստեց Վասպուրականում»²¹:

ԱՄՆ-ում լույս տեսնող «Կոչնակ» պարբերականն էլ²² Մ. Փորթուզայանին բնութագրում է որպէս ազգային ու կրթական «գործերուն հմուտ», անաչառ ու անկաշառ, վեհամճն, անկեղծ և հայրենասեր, «կարող գրող մը, յաջող ուսուցիչ», «փոթորիկ հրաւիրող լեռ մը բլուրներուն մէջ» ով ջանասիրության շնորհիվ միշտ մեծ արդյունք էր ապահովում²³: Հայ իրականությունում, թերթի Ռուսաս հոդվածագրի կարծիքով, այդ շրջանում ոչ մեկն այնքան արագ չներշնչեց և «շարժման մեջ չդրաւ Հայ ուսանողը ու այդչափ կարճ ժամանակի մէջ այդչափ մեծ արդիւնք չցուցուց»²⁴, ինչպէս Մ. Փորթուզայանը:

«Արմենիա»-ին ընդդիմախոս պարբերականների մեծ մասը կուսակցական պաշտոնաթերթեր էին²⁵, մի մասն էլ՝ չէզոք²⁶: Առավելապէս արծագանքելով «Արմենիա»-ի հրապարակումներին՝ քաղաքական շահերից ելնելով, իսկ նորաթուխներն էլ իրենց անվան շուրջ աղմուկ բարձրացնելու նպատակով, հրապարակում էին նյութեր, որոնց «Արմենիան» կամ չէր արծագանքում կամ պատասխանում էր հավասարակշռված ու առանց մաղձի: Ավելի հաճախակի էին բանավեճերը «Հնչակ»-ի ու նրա արբանյակների («Մարտ», «Ապտակ» և այլն) հետ: Անմիջապէս վճռական գործողությունների կողմնակից հնչակյանները «ժամկետանց», «պահպանողական» և նմանատիպ ոչ այնքան իրավացի

²⁰ **«Աւետաբեր»**, թիվ 14, Կ.Պոլիս, 8 ապրիլի, 1911, էջ 328-331:

²¹ **«Նոր կեանք»**, 1899, թիվ 18:

²² **«Կոչնակ»** պարբերականը լույս է տեսել 1900 թ.-ից: 1919 թ. դարձել է «Կոչնակ Հայաստանի», իսկ 1921-ից՝ «Հայաստանի կոչնակ» մինչև 1968 թ.՝ սկզբում Բոստոնում, ապա՝ Նյու Յորքում, որպէս շաբաթաթերթ, այնուհետև դարձել է ամսագիր: Տարբեր տարիներին պարբերականը խմբագրել են Վ. Քյուրեճյանը, Խ. Պեննեյանը, Զ. Խաղոյանը, Վահե Հայկը, Ա. Պետրիկյանը և ուրիշներ:

²³ Նույն տեղում:

²⁴ **«Կոչնակ»**, 8 ապրիլի, 1911, էջ 234-327:

²⁵ **«Հնչակ»**, **«Մարտ»**, Հնչակյան կուսակցության պաշտոնաթերթեր, լույս են տեսնել Լոնդոնում, **«Նոր կեանք»**, Վերակազմյալ Հնչակյան կուսակցության, Լոնդոն, **«Դրօշակ»**, Թիֆլիս, **ՀՅԴ** պաշտոնաթերթ, ռամկավարների **«Ազգ»**, Բոստոնում, **«Արեւ»**, Ալեքսանդրիայում:

²⁶ **«Մշակ»**, **Թիֆլիս**, **«Ազատ Բեմ»**, Ալեքսանդրիա, **«Արաքսը»**, Սանկտ-Պետերբուրգ, **«Իրավունք»**, Վառնա, **«Հայաստան»**, Լոնդոն և այլն:

որակումներով քննադատում ու չէին հանդուրժում աստիճանական վերափոխումների կողմնակից Մ. Փորթուզայանին:

Փորթուզայանին շատ էր գայրացել, երբ «Ազատ բեմ»-ը սուտ ու «լրբենի» զրպարտություններով հանդգնել էր սրբապղծել հայ ազատագրական շարժման նահատակներից Մկրտիչ Ավետիսյանի հիշատակը՝ մեղադրելով նրան Ամերիկայում հեղափոխության անունով գումարներ հավաքելու և դրանցով Փորթուզայանի հետ իրենց կարիքները հոգալու համար²⁷: Նա պատասխանում էր, որ մեղադրելու համար մարդիկ պիտի պատմություն իմանան և հեղափոխության ակունքներում կանգնած մարդկանց, որպեսզի հիմնազուրկ հայտարարություններով չպղծեն նահատակների հիշատակը²⁸:

Փորթուզայան-արմենականներ առնչությունները²⁹ քննարկելով՝ Բոստոնի «Ազգ», Վառնայի «Իրավունք» և այլ թերթեր հորդորում էին Մ. Փորթուզայանին հրաժարվել ժխտողական կեցվածքից: Իսկ երբ վերջինս մերժեց, «Իրավունք»-ը մեղադրեց Մ. Փորթուզայանին, նշելով, որ «արմենիական» բառը նրա սեփականությունը չէ և դրա օգտագործման համար պետք չէ նրանից թույլտվություն խնդրել, որ Փորթուզայանն անհանգստանում է արմենականների և վերակազմյալ հնչակյանների միավորմամբ, դրա համար է մերժեցել ՅՅԴ-ին ու այդ պահվածքով փորձում է հաճոյանալ նրան³⁰:

1890-ականների վերջերից ազատագրական պայքարին վերաբերող արմատական հարցերում «Արմենիա»-ն կրկնում էր ինքն իրեն: Ավելին, որդեգրած խիստ զգուշավոր կեցվածքով, առանձնապես մեծ հետաքրքրություն չէր ներկայացնում: Այդ պատճառով էլ հաջորդ տարիներին եական անդրադարձները մամուլում նրան շատ չեն:

Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին գաղափարախոսական սահմանափակումների պատճառով Հայաստանում ազգային-ազատագրական պայքարի պատմությունը հրապուրիչ թեմա չէր: Հատ ու կենտ զրվածքներում Մ. Փորթուզայանին ու «Արմենիա» թերթին ուղղակի անդրադարձներ գրեթե չկան, իսկ թեման լուսաբանվել է նախկին մտածողության և կոմունիստական թելադրանքի անհաջող «համաձայնեցումներով», միակողմանի, կուսակցականության շեշտադրմամբ, դասակարգային ելակետով և զգալի վերապահումներով³¹:

Հայ ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունը նոր մակարդակի բարձրացավ խորուշովյան ձեռնարկից հետո: Չթերագնահատելով մինչ այդ արվածը, նկատենք, որ նախկին թույլ ու սիրողական երկերին փոխարինելու եկան պատմագիտական հիմնարար աշխատություններ³², որոնք լավագույնս

²⁷ «Ազատ Բեմ», 1906, ապրիլի 21:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Այս խնդիրը ստորև մանրամասն քննարկվում է:

³⁰ «Իրավունք», 1908, ապրիլի 9:

³¹ **Լեօ**, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հտ. Ա, Երևան, 1994, նույնի՝ Անցյալից, Անցեալից, Թիֆլիս, 1925 և այլն: **Մյասնիկեան Ա.**, Կուսակցությունները զաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924, նույնի՝ Ազգային հարցի առթիվ, Մոսկվա, 1919: **Աճառեան Հ.**, Տաճկահայոց հարցի պատմութիւնը, Նոր-Նախիջևան, 1915 և այլն:

³² **Դալլաքյան Կ.**, Ռամկավար Ազատական կուսակցության պատմություն 1921-1940, գիրք առաջին, Ե., 1999, նույնի, Արմենականություն և Սահմանադրականության հետ ՌԱԿ-ի առնչությունների հարցի շուրջ, Թեզիսներ Արմենական կուսակցության 110 ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի (12 մարտի 1996 թ.), Ե., 1996, **Խառատյան Ա.**, Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, Ե., 1958, **Խուդինյան Գ.**, Հ.Յ. դաշակցության քննական պատմություն, ակունքներից մինչև 1895 թ.

ներկայացրեցին ազգային-ազատագրական պայքարի վերելքին նպաստող պայմանները և անհերքելիորեն ապացուցեցին, որ այդ պայքարն ինքնաբերաբար էր ու պատասխան օսմանյան իշխանությունների վարած հայահալած քաղաքականության:

Անդրադառնալով «Արմենիա»-ին՝ Ջ. Կիրակոսյանը շեշտել է, որ Մ. Փորթուզայանն իր պարբերականով մեծապես նպաստել է հայոց վերագարթոնքի գործընթացին: Շրջանցելով կոմունիստական վարչակարգի սահմանափակումները՝ հեղինակը բարձր է գնահատել «բուրժուական «Արմենիան», իսկ խմբագրին համարել է հայ ժողովրդի «քաղաքական մուրացկանության» օգտակարությանը կասկածող, խաբվելուց չհոգնելու սովորույթը մերժող ու նրանց մեջ ըմբոստություն ներարկող, գիտակցված և մանրակրկիտ նախապատրաստված հեղափոխության կոչող գործիչ³³: Հեղինակի կարծիքով Մ. Փորթուզայանն առաջիններից մեկը հասկացավ, որ թուրքի նպատակն է եղել «ջնջել հայկական ցեղը յուր հայրենիքի միջև» և եթե հայ ժողովուրդը ժամանակին չսթափվի ու չպայքարի, կկորցնի ամեն ինչ ու ինքն էլ կկորսվի: Ըստ հեղինակի՝ «Արմենիան» առաջին թերթն էր, որ ժողովրդի տառապանքների մասին խոսեց բարձրաձայն, վառեց ազգասիրության ու հայրենասիրության կրակը: Մեծագույն նվաճում համարում այն, որ թերթն ընթերցողներին համոզում էր սեփական ուժերին կոթնելու, համերաշխ գործելու և փոխադարձ օգնության միջոցով բաղձալի ազատությանը հասնելու դրույթները:

Պատմաբան Ա. Համբարյանն էլ հանգամանալից քննարկելով «Արմենիա»-ի հիմնադրման գործընթացը և արևմտահայության ազատագրության ուղիների վերաբերյալ տեսակետները և անդրադառնալով Փորթուզայան-«Արմենիա»-Արմենական կուսակցությունն առնչություններին՝ գրում է, որ իմանալով, թե իրեն ու իր թերթին են վերագրում Արմենական կուսակցության հիմնադրման պատիվը, Փորթուզայանը հայտարարել է, որ «Արմենիան» իր անունով երբևէ կուսակցություն չի հիմնադրել: «Այնուամենայնիվ, արմենականները շարունակում էին «Արմենիա»-ն համարել իրենց գաղափարական օրգանը»,- նշում է Համբարյանը և ավելացնում, որ արմենականները «Արմենիա»-ի հետ կապված էին միայն գաղափարապես³⁴: Հեղինակը շեշտում է թերթի ներդրումը հայ

վերջը, Ե., 2006, **Կիրակոսյան Ջ.**, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ., Ե., 1980: **Կոստանդյան Է.**, Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ 1885-1914 թթ., Է. **Կոստանդյանի խմբագրությամբ**, Ե., 2003, **Համբարյան Ա.**, Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, նույնի՝ Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Ե., 1965, նույնի՝ Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-1914), Ե., 1979, **Հովհաննիսյան Ա.**, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2-րդ, Ե., 1956, **Հովհաննիսյան Ռ.**, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը, Ե., 1965, **Վարդանյան Հ.**, Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դ. վերջին քառորդում, Ե., 1967: **Саркисян Է.**, Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти 19-ого и начале 20-ого вв., Է., 1972:

³³ **Կիրակոսյան Ջ.**, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ., Ե., 1980, էջ 233:

³⁴ **Համբարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 160: Ժամանակաշրջանի շատ ու շատ կնճռոտ հարցեր ճիշտ ընկալելու խնդրում մեզ համար օգտակար են եղել նաև հեղինակի «Ազրարային»

քաղաքական մտքի զարգացման և, հատկապես, արևմտահայոց ազատագրական պայքարի գաղափարախոսության մշակման գործում և համարում այն նորարար գաղափարների յուրահատուկ շտեմարան:

Ակադեմիկոս Գ. Գալոյանն էլ արժևորելով Մ. Փորթուզայանի ազգանվեր գործունեությունը՝ նշում է, որ նա ազատության համար ոտքի ելած փառանգի հավատավոր ներկայացուցիչն էր և իր «Արմենիայով հայոց մեջ զինված պայքարով ազատագրվելու գաղափարախոսության հիմնադիրներից մեկը»³⁵:

Պատմաբան Յ. Վարդանյանը պարզաբանելով հայության գաղափարական հիմնահարցերը և ազատագրության հնարավոր ուղիները՝ շեշտել է, որ հայրենասիրությամբ և արիության ոգով տոգորված «Արմենիա»-ի «խնդիրն էր հայերի ծանր վիճակի մասին իրազեկել աշխարհի պրոգրեսիվ մարդկությանը, իրենց եղբայրների ազատագրության շուրջ կենտրոնացնել և արուպագանդել պայքարի գաղափարախոսությունը»³⁶:

Խորհրդային կայսրության վերջին տարիներից սկսած, առավել ևս՝ Հայաստանի անկախության հռչակումից հետո, հայ ազգային-ազատագրական շարժման, մամուլի, ֆիդայական պայքարի, կուսակցությունների և մի շարք այլ հարցերի պատմության ուսումնասիրությունը դարձավ օրախնդիր³⁷:

XIX դարի կեսերից խմորվող ազատագրական շարժման ծնունդն ըստ Ստ. Պողոսյանի, պայմանավորված էր տնտեսական, քաղաքական, մշակութային և միջազգային ազդակներով, որոնք հայ մարդու մեջ փոփոխության պահանջ առաջացրին: Այդ լուսավոր գաղափարի առաջին սերմանողներից մեկը «օսմանյան բռնատիրության դեմ հրապարակային ձայնը հնչեցնող»³⁸ «Արմենիան» էր:

հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914)», Ե., 1965, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-1914)», Ե., 1979, աշխատությունները, թեև անմիջականորեն «Արմենիա» թերթի պատմությանը նվիրված չեն:

³⁵ **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 404:

³⁶ **Վարդանյան Յ.**, Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դ. վերջին քառորդում, Ե., 1967, էջ 291:

³⁷ **Վևորյան Յ.** Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից, Ե., 2012, **Գրիգորյան Յ.**, Ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Ե., 2002, Նույնի՝ Հայոց ազատամարտի զինման և ֆինանսավորման խնդիրը (1890-1908 թթ.), Ե., 2004, **Խուրդյան Գ.**, Յ.Յ. դաշնակցության քննական պատմություն, ակունքներից մինչև 1895 թ. վերջը, Ե., 2006, **Կոստանոյան Է.**, Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ 1885-1914 թթ., Է. Կոստանոյանի խմբագրությամբ, Ե., 2003, **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Ե., 1998, **Ներսիսյան Ա.**, Յ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն (1898-1908), Խ. Բ. և Գ. Պէյրուք, 2008, Պէյրուք, 2013, Նույնի՝ Ռուբեն, Ե., 2007, Նույնի՝ Ավետիք Սահակյան, Ե., 2006, **Սարգսյան Ս.**, Հայ Սահմանադրական ռազմավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2009, Նույնի՝ 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Ե., 2010, 37, **Սվազյան Վ.**, Սարգիս Հայկունի. Կյանքն ու գործը, «Հայ ազգագրություն և բանախոսություն», Խ. 4, ՀԱՍՀ ԳԱ հրատ., Ե., 1973, **Յովհաննիսյան Գ.**, Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), Ե., 2012, **Կարապետյան Ա.**, Արմենական կուսակցության կազմավորումը և գործունեությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, թեկնածուական առեմախոսության սեղմագիր, Ե., 1995 և այլն:

³⁸ **Պողոսյան Ստ.**, Հայոց ցեղասպանության պատմություն, Խո, 1-ին, Ե., 2008, էջ 382:

Հայ ազատագրական շարժման մեջ Մ. Փորթուզալյանի ու «Արմենիա» թերթի ունեցած դերակատարության խնդրին յուրահատուկ մոտեցում ունի Է. Կոստանդյանը: Ըստ նրա՝ Եվրոպայից դուրս մղվելուց հետո օսմանյան իշխանությունները կայսրության արևելյան շրջաններում վարեցին հայափախած քաղաքականություն, ինչի արդյունքում հայ և թուրք ժողովուրդների միջև այդ պահին արդեն առկա հակասությունը վերաճեց «ով-ումի» անգիջում պայքարի: Այդ գոյակռվի ակունքներում Կոստանդյանն առանձնահատուկ տեղ է հատկացնում «Վանում հեղափոխական սերունդ ստեղծող և երկար տարիներ հայրենասիրական աշխատանք ծավալած»³⁹ Մ. Փորթուզալյանին: Բարձր գնահատելով վերջինիս կրթալուսավորական ու կազմակերպչական գործունեությունը և չներելով նրա «ցուցանող արարքները»⁴⁰, հետազոտողը շեշտում է, որ Մ. Փորթուզալյանի աշակերտները Մ. Ավետիսյանի ղեկավարությամբ ստեղծեցին կուսակցություն, որը հետագայում «Արմենիա» թերթի ամուսնով կոչվեց Արմենական»⁴¹:

Հեզելյան սկզբունքով բանաձևելով ազգային կուսակցությունների եռամիասնությունը՝ թեզ (արմենականություն), հակաթեզ (հնչակյաններ)⁴² և սինթեզ (դաշնակցություն), Գ. Խուդինյանը նշում է, որ արմենականությունն առաջադրեց «ազգային հեղափոխության» գաղափարը, որը պետք է հիմնվեր սեփական ուժերի և հնարավորությունների վրա: Այդ ուժերի ցրված լինելն ու տկարությունը հանգեցրեց Փորթուզալյանի կողմից «ներքին ուժի» ձևավորման ռազմավարական խնդրի առաջադրմանը որպես արտաքին հանգամանքների բարենպաստ դասավորությունից օգտվելու վճռորոշ պայման»⁴³: Պատմաբանի բնորոշմամբ Մ. Փորթուզալյանը հստակ գիտակցում էր, որ հայ ժողովուրդը դեռևս պատրաստ չէ սկսվող ազատագրական մաքառումներին, ինչն էլ հանգեցնում էր նախ կրթվելու, կազմակերպվելու, ապա նաև սեփական ուժ գոյացնելու գաղափարին: Սակայն հայ երիտասարդության արմատական թևը դժգոհ մնաց «Արմենիա»-ի չափավոր ուղեգծից և որդեգրելով անմիջապես գործելու ու առանց հապաղելու արդյունքներ տեսնելու մարտավարություն, «հակադրեց միմյանց ազգային դատը ու համամարդկային ազատագրության իդեալը»⁴⁴: «Արմենիան», փորձելով կողմնորոշվել իր դավանած սկզբունքների և «Հնչակ»-ի առաջ քաշած թեզերի միջև, նկատում էր, որ «առաջինը ամեն հայու արհեստը մեջ մեկ մեկ մարդիկն իրացան կուզե տեսնել, երկրորդը ամեն Հայու զանկին մեջ «Կարլ Մարքս»ի միզամած վարդապետությունները կուզե զետեղել»⁴⁵: Ուստի երբ «Արմենիա»-ն «Հնչակ»-ի

³⁹ Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, էջ 89:

⁴⁰ Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց, (կյանքը և գործունեությունը), Ե., 1979, էջ 129-134:

⁴¹ Կոստանդյան Է., Սկրտիչ Խրիմյան (հասարակական քաղաքական գործունեությունը), Ե., 2000, էջ 325:

⁴² Ընդհանուր առմամբ, ընդունելով հանդերձ հեզելյան այս բանաձևումը, այնքան էլ համամիտ չենք հայ ազատագրական շարժման ակունքներում կանգնած կուսակցությունների ու նրանց առաջ քաշած տեսակետները դիտարկել որպես հակադիր բևեռներ: Ի վերջո, նրանք այնքան էլ լավ չէին տիրապետում տարբեր իզմ-երին և անուն էին այն, ինչ կարողանում էին, անկախ նրանից, թե ինչ էին մտածում կամ ինչի շուրջ էին բանավիճում ժնններում նստած տեսաբան-առաջնորդները:

⁴³ Խուդինյան Գ., նշվ. աշխ., էջ 118:

⁴⁴ Խուդինյան Գ., նշվ. աշխ., էջ 121:

⁴⁵ Խուդինյան Գ., նշվ. աշխ., էջ 118:

կտրուկ հարցադրումներին պատասխանում էր «Երագով օր կանցունենք⁴⁶» և «Միութիւնը զօրութիւն է⁴⁷» ձևակերպումներով, ապա ակնհայտ է դառնում, եզրակացնում է Գ. Խուդինյանը,- որ «նման բանաձևումների տեսական-գաղափարախոսական «պարզունակությունը», «գործնական գեղնի վրա ավելի իրատեսակաւ է, քան հնչակյանների տեսական մտքի՝ արևմտահայ իրականությանը չհամապատասխանող «խորությունը»⁴⁸:

Թերթի հիմնադրման պատմությանը հետաքրքիր, սակայն մեզ համար անընդունելի տեսակետ է հայտնել Լ. Ալոյանը: Նրա կարծիքով, քանի որ օսմանյան իշխանությունները խիստ հսկողություն էին սահմանել ընդդիմադիրների նկատմամբ. «վերջիններս ստիպված եղան Մ. Փորթուզալյանին գործուղել (՞) Մարսել...»⁴⁹:

Ազգային-ազատագրական շարժման և ավանդական կուսակցությունների ու առանձին անհատների գործունեության ուսումնասիրության հարցում մեծ ներդրում ունեն **սփյուռքահայ ուսումնասիրողները**: Թեև հրապարակի վրա առկա աշխատությունների զգալի մասը կատարյալ չեն, սակայն փաստառատ են, պարունակում են սթափ վերլուծություններ և եզրահանգումներ:

Սփյուռքում լույս տեսած աշխատություններից առանձնանում է ռամկավար Ա. Դարբինյանի պատմագիտական ուսումնասիրության ու հուշագրության շաղախ աշխատությունը: Հեղինակը բարձր է գնահատում «Թուրք բռնապետութեան դէմ ըմբոստացող դասակարգի բողոքի ձայն «Արմենիան»⁵⁰: Նա շեշտում է, որ «Արմենիա»-ի հրատարակությունը և «անոր միջոցով արտայայտուած առողջ գաղափարներն են, որ ներշնչեցին փորթուզալեաններուն որոշ ուղղութիւն եւ մարմին մը տալով իրենց գաղափարական միութեան, սկիզբը դարձնել զայն մաքուր հայ անդրանիկ յեղափոխական կուսակցութեան»⁵¹: Խոսելով ազատագրական շարժման նախակարապետներ Մ. Խրիմյանի և Մ. Փորթուզալյանի համագործակցության մասին, Ա. Դարբինյանն իրավացիորեն եզրակացնում է, որ «Անոնք 40–50 տարի առաջ խորապես այն համոզման եկած էին, թե հայերը Թուրքիոյ մէջ ինքնապաշտպանութեան պէտք է դիմէն ամեն բանէ առաջ, ուզեցին արթնցնել հայ ժողովրդի ինքնագիտակցութիւնը, բայց բնաւ չըսին, թե փութկոտութեամբ և տղայական ցոյցերով կարելի պիտի ըլլա ժողովուրդն ապստամբութեան մղել»⁵²: Միաժամանակ հեղինակը խոսում է Մ. Փորթուզալյանի երբեմն դրսևորվող ցուցամուլ և անհարկի արարքների մասին:

«Արմենիա» - Արմենական կուսակցություն առնչությունները քննարկելով՝ Վ. Ղազարյանը կուսակցության գաղափարական հոգևոր հայր է համարում Մ. Փորթուզալյանին, իսկ ծնիչ՝ «Արմենիա»-ն. «Հայութիւնը,- հաւանաբար նկատի ունենալով որ կազմակերպութեան յարած անդամները ստանձնած էին Փորթուզալեանի «Արմենիա» թերթին ցուունը եւ դարձած անոր միտքերուն տարածիչը,- կուսակցութեան անդամները ճանչցաւ իբրեւ արմենիականներ, եւ

⁴⁶ Մեր ընկերը-մեր ոյժը, «**Հնչակ**», 1891, թիվ 3, մարտ, էջ 2:

⁴⁷ «**Արմենիա**» լրագիր, 1891, 15 յուլիս, թիվ 90:

⁴⁸ **Խուդինյան Գ.**, նշվ. աշխ., էջ 124:

⁴⁹ **Ալոյան Լ.**, «Արմենիա» շաբաթաթերթը (հրատարակության 125-ամյակի առթիվ), ԼՂԳ, Ե., 2010, № 3 (629), էջ 110:

⁵⁰ **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, յուշեր 1890էն 1940, Ե., 2003, էջ 81:

⁵¹ **Դարբինեան Ա.**, նշվ. աշխ., էջ 81:

⁵² **Դարբինեան Ա.**, նշվ. աշխ., էջ 106:

այդպիսով է որ շարժումն ինքզինք անուանեց Արմենական կազմակերպութիւն»⁵³: Իսկ հետագայում, երբ կուսակցությունն «արդեն գործնական աշխատանքներու շրջանին մեջ էր», հնարավոր էր համարվում «օգտուիլ այդ թերթին մեջ երեւցած այս կամ այն թելադրութիւններէն»⁵⁴ և նյութապես օգնել նրան, իսկ հետո դարձնել իրենց օրգանը:

«Արմենիան» «կըլլար թուրք բռնապետութեան դէմ ընթուստացող դասակարգի բողոքի ձայնը» և իրատեսական խմբագրականներով «լաւագոյն առաջնորդը կը հանդիսանար»⁵⁵ մեր ազատագրական պայքարում իր հուշագրություն-ուսումնասիրությունում արժևորում է Ս. Նաթանյանը: Հեղինակը շարժման «անճախընթաց ձախողանքը» տեսնելով՝ հրամայական անհրաժեշտություն էր համարում «Արմենիա»-ի օրինակով «ընդունիլ եւ հրապարակ հանել սխալները, զգուշացնելու համար նոր և գալիք սերունդները մեր սայթաքումներէն»⁵⁶:

Հայոց պատգամը «Մեծ երազ» անվանած Գ. Ահարոնյանը կարևորում է «Արմենիա»-ի հանդարտաբարո ընթացքը և բերած մեծ նպաստը «կարելիին արուեստ քաղաքականութիւնը» քարոզելու, ժողովրդի գիտակցությանը հասցնելու ու ոտքի հանելու գործում. «Փորթուգալեանի «Արմենիա» թերթը պոռոտ քարոզչութենէ և արկածախնդրական վտանգաւոր գործունեութենէ հեռու մնաց միշտ, անիկա որդեգրեց իրատես վարքագիծ մը, եւ խուսափեցաւ ցատագովելէ ծրագիրներ, որոնք կրնային անհարկի կերպով վտանգել մեր անպաշտպան զանգուածը»⁵⁷:

Պ. Տեփոյանը «Ուխտումնաճներ» շարքում⁵⁸ թէն «Արմենիա» թերթին շատ տեղ չի հատկացրել, սակայն իրատեսորեն է ներկայացրել երկրում տիրող ծանր կացությունը և ժողովրդի պայքարելու պատրաստակամությունը: «Պերլինի դաշնագրութեան հետեւող հայկական մտաշուարումի շրջանը, երկար չտեսեց»,- արձանագրում է հեղինակը, ապա շեշտում, որ ժողովրդին «կառաջնորդէին շարժումներն ու ինքնամուղ շարժողները»⁵⁹: Դա «սրբազան հրայրքէ մը բռնուած» ցեղի ուժի արտահայտիչ երիտասարդությունն էր՝ որը նետվեց ոտքի հանելու ժողովրդին և իրագործելու ազատության անկարելի հրաշքը: Առաջինը եղավ մեր մտավոր գարթոնքը՝ «ութունական թուականներու վերջերուն մեր քաղաքական ազատութեան առաջապահները հրապարակ կու գային, գերագոյն վճռականութեանը մահը իսկ արհամարհելով նետուեցան պայքարներու մէջ»⁶⁰, - գրում է Պ. Տեփոյանը և ընգծում, որ դրանց առաջին շարքերում էր Ս. Փորթուգալյանն իր «Արմենիա»-ով:

Ներկայացնելով ազատագրական գոյամարտում թերթի ներդրումը Հ. Ուզունյանը գրում է. «Արմենիա»ն հանդիսացաւ Թուրքիոյ բռնատիրական, վայրագ արարքները քողագերծող, հայ ժողովրդին բողոքը բանածեւող եւ անոր

⁵³ **Ղազարեան Վ.**, Արմենական կուսակցութիւնը (ակնարկներ), Պէյրուք, 1985, էջ 12:

⁵⁴ **Դարբինեան Ա.**, նշվ. աշխ., էջ 40:

⁵⁵ **Նաթանեան Ս.**, Արմենական կուսակցութիւնը ծագումն սկսեալ մինչեւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան կազմութիւնը, Գահիրէ, 1990, էջ 14:

⁵⁶ Նույն տեղում, էջ 7:

⁵⁷ **Ահարոնեան Գ.**, Մեծ երազին ճամբուն վրայ (ակնարկ Հայկական հարցի պատմութեան վրայ), Գ հրատարակութիւն, Լոս-Անճելէս, 1968, էջ 38:

⁵⁸ **Տեփոյեան Պ.**, Միհրան Տամատեան (1863-1945), Պէյրուք, 1964, Ատոմ Ալլանեան, Պէյրուք, 1988, Նիւթեր պատմութեան համար, մեր առաքելութեան ճամբով, Պէյրուք, 1988:

⁵⁹ **Տեփոյեան Պ.**, Ատոմ Ալլանեան, Պէյրուք, 1988, Նիւթեր պատմութեան համար, մեր առաքելութեան ճամբով, Պէյրուք, 1988, էջ 17:

⁶⁰ **Տեփոյեան Պ.**, նշվ. աշխ., էջ 25:

իրաւունքները պահանջող հայ հայրենասերին ձայնը»⁶¹: Ըստ Ուզունյանի «Արմենիա»-ն «կթելադրէր դիմել բոլոր յարմար միջոցներուն հայ ժողովրդին ազատօրէն ինզինք կառավարելու իրաւունքը» նվաճելու համար, «կիրատարակէր ողբալի վիճակը զաւառներու հայութեան և կարծարծէր հայրենասիրական բուն զգացումները ժողովրդին մէջ»⁶²:

3. Վարդիվառյանն⁶³ էլ նշում է, որ հայ ժողովրդին ոտքի հանելու համար անհրաժեշտ էր նախ հեղափոխել նրան զաղափարապես, ինչն էլ նախածեռնեց «Արմենիան»: Յեղինակն ընդգծում է, որ Մ. Խրիմյանի հայրենասիրությունը, Մ. Փորթուզալյանի լուսավորությունը և Մ. Ավետիսյանի ազատասիրությունը հեղաբեկում առաջացրին հայության մեջ և ծնունդ տվեցին հեղափոխական գաղափարախոսությանը, զենքի դիմելու ու ինքնապաշտպանվելու մղումներին: «Արմենիա» թերթի գաղափարներին ծնվեց և հասակ առավ ազատագրական պայքարի գիտակցությանը ու վճռական պայքարի լծված մի սերունդ, որը հայոց փրկությունը տեսնում էր մարտական ուժի մեջ: Յեղինակն առանձնացնում է արմենականների հայդուկային պայքարին սատարող **ձախ-արմատական** և **չափավոր թևերը** և իրավացիորեն ընդգծում, որ կուսակցության օրգանի դերը որոշ ժամանակ կատարել է «Արմենիա»-ն:

Ա. Ահարոնյանը⁶⁴ «Արմենիա»-ն համարում է «ազատալեզու քարոզիչ», որը «չըլլալով հանդերձ բռնի ուժի ջատագով, յեղափոխական ոգի կը ներշնչէր Վասպուրականի երիտասարդ սերունդին և զայն կը մղէր ընդդէմ թուրքին»⁶⁵:

Պարբերականի քարոզչակազմակերպչական գործունեությունը բարձր են գնահատել նաև սփյուռքահայ նշանավոր մտավորականներ Մ. Ճիզմենճյանը, Կ. Սարաֆյանը, Ս.Իզմիրլյանը, Ն. Ակիշյանը և ուրիշներ⁶⁶:

Հայ ազատագրական գաղափարաբանությանը նվիրված ծանրակշիռ ներդրում կարելի է համարել Գ. Գյոզալյանի ուսումնասիրությունները⁶⁷: Հայաստանի հայությանը պարտադրված խորհրդային ամբողջատիրության սկզբնական շրջանում, երբ հայ քաղաքական մտքի ու ազգային արժեքների դեմ բոլշևիկյան գաղափարախոսության դիտանկյունից ծավալվեց պատմության նենգափոխումների ալիքը, Գ. Գյոզալյանը մերկացրեց խեղաթյուրելու այդ փորձերը և ընդգծեց այն համազգային արժեքները, որոնք կարևոր էին ժողովրդի հիշողության պահպանման և վերաթարմացման գործում: Բանաձևելով, որ 1880-

⁶¹ **Ուզունյան Յ.**, Արևմտահայ Ազատագրական պայքարին ծագումը Արմենական կուսակցութեան մեջ և Ռանկավար Ազատական կուսակցութիւնը իր 60-ամեակին, Լոս-Անճելըս, 1986, էջ 22:

⁶² **Ուզունյան Յ.**, նշվ. աշխ., էջ 23:

⁶³ **Վարդիվառյան Յ.**, Մեծ երազի ճամբուն ուղեւորները եւ համապարփակ պատմութիւն Ռանկավար ազատական կուսակցութեան, Ա հատոր, Արմենական կազմակերպութիւն քաժիւն, Նիւ Ճըրզի, 2015:

⁶⁴ **Ահարոնյան Ա.**, Յերոսական դէմքեր Ռ.Ա.Կ.ի, Լոս-Անճելըս, 2001:

⁶⁵ **Ահարոնյան Ա.**, Երախտավորներու ուղին, Ա հատ., Լոս-Անճելըս, 2006, էջ 14-15:

⁶⁶ **Ճիզմենճյան Մ.**, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925, Ֆրեզնո, 1930, **Սարաֆեան Կ.**, Ակնարկ մը Արմենական կուսակցութեան պատմութեան վրայ, Պէյրուս, 1960, **Իզմիրլեան Ս.**, Դատումներ մեր հարիւրամեայ յեղափոխութեան մասին անճանական յուշերուս ընդմեջէն, Պէյրուս, 1962, Ակիշեան Ն., Մեծերէն տասը, Լոս Անճելըս, 1990:

⁶⁷ **Գիւզալեան Գ.**, Պատմական հնդիրներ հեղինակ «Արագ» Հրատարակչքին, Պէյրուս, 1937, նույնի՝ Հայ քաղաքական Մտքի Զարգացումը եւ Յ. Յ. Դաշնակցութիւնը, Մատենաշար «Դրօշակ», Թիւ 66, Փարիզ, 1927, նույնի՝ Խրիմեան Հայրիկ, Գաղափարների աշխարհը, Պէյրուս, 1954:

ական թթ.-երին «թուրքը երկրի իրավական տերն էր, քուրդը՝ իրական տերը, հայը՝ հայրենիք ունեցողը եւ իրավագուրկը»⁶⁸, Գյոզալյանը պարզաբանում էր, որ ստեղծված իրավիճակում քուրդն ու թուրքը միացել էին հայերի դեմ և հենց դրա արդյունքում ծագեց Հայկական հարցը: Իսկ հայության մեջ սկսվեցին մտավոր վերածնության ու հոգևոր վերափոխման շարժումները, որոնց ակունքներում հեղինակն ընդգծում է Մ. Փորթուզալյանի ու նրա «Արմենիա»-ի էական դերակատարությունը:

Արխիվային վավերագրերի սակավության պայմաններում, «Արմենիա» թերթի պատմությունը շարադրելու գործում, առանձնապես կարևորվում են հուշագրությունները: Արմենական-ռանկավար հուշագիրները հիմնականում դրական են գնահատում Փորթուզալյանի գործունեությունն ու «Արմենիա»-ն⁶⁹: Հնչակյան հուշագիրների⁷⁰ մոտ նկատելի է երկու մոտեցում. հեղափոխության առաջին շրջանում գրված հուշերում բոլորն անխտոր քննադատում են Մ. Փորթուզալյանին, պահպանողական և, նույնիսկ, հետադիմական անվանում: Հետագա տարիների հուշագրողները՝ նեղվելով ՀՀԴ-ի տիրապետող դիրքերից, սկսում են դրական վերաբերվել հավանական դաշնակից դարձած ռանկավարների ակունքն եղած արմենականներին, նրանց հոգևոր հայր Մ. Փորթուզալյանին ու նրա թերթին: ՀՀԴ հուշագիրները⁷¹ ներողամիտ վերաբերմունք են դրսևորում Մ. Փորթուզալյանի ու «Արմենիա»-ի առաջին տարիների գործունեության նկատմամբ, իսկ հետագայում՝ հատկապես գաղափարական հարցերում, քննադատում են: Ավելի ուշ՝ գնահատելով Մ. Փորթուզալյանի դաշնակցամետ պահվածքն ու «Արմենիա»-ն համարելով անվտանգ, այլևս լուրջ ուշադրության չեն արժանացնում:

Նշանավոր հայրուկ Ա. Եկարյանի հուշերը թեև գերծ չեն կուսակցականությունից, սակայն փաստառատ են և սկզբնաղբյուրի նշանակություն ունեն: Ներկայացնելով հեղափոխության արշալույսը՝ Ա. Եկարյանը նշում է, որ

⁶⁸ **Գիւզալեան Գ.**, Խրիմեան Հայրիկ, Գաղափարների աշխարհը, Պէյրուք, 1954, էջ 6:

⁶⁹ Յուշեր **Արմենակ Եկարեանի**, Պէյրուք, 1985, **Տամատեան Մ.**, Իմ յուշերս, խմբագրեց եւ ծանօթագրեց Վաչէ Ղազարեան, Պէյրուք, 1985, **Թերլեմեզյան Փ.**, Կյանքիս հուշերը (մեքենագիր), Տե՛ս Հայաստանի ազգային պատկերասրահ, հուշա-ծեռագրային բաժին, ֆ. 60, տ. 11, թրթ. 27, 28, **Պողոտեան Հ.**, Մեր դերը, ի՞նչ եղաւ եւ ի՞նչ պիտի ըլլայ, Պոսթոն, 1935, նույնի՝ Կուսակցական կեանքի յուշերս, Պէյրուք, 1987:

⁷⁰ **Ճանկուլեան Յ.**, **Յիշատակներ հայկական ձգնաժամին, Կ.Պօլիս, 1913, Խան-Ազատ Ռ.**, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1927, N 11, սեպտեմբեր, էջ 124-138, 1927, N 1, նոյեմբեր, էջ 122-135, 1927, N 2, դեկտեմբեր, էջ 112-130, 1928, N 3, հունվար, էջ 114-128, 1928, N 4, փետրվար, էջ 123-135, 1928, N5, մարտ, էջ 102-114, **Աղանիդյան Խ.**, Հայ սոցիալ-դեմոկրատական «Հնչակ» կուսակցության և նրա գործունեության մասին, Բաքու, 1925, ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 24, **Սապահ-Գիւլեան Ստ.**, Փոքր Հայքի յիշատակներ, Չիկագո, 1917, **Բերբերեան Ռ.**, Պատրանքների շրջանից և այլն:

⁷¹ **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ե., 1990, **Փափազեան Վ.**, Իմ յուշերը, հատ. առաջին, Պոսթոն, 1950: **Արամայիս Ազնաուրեանի** յուշերը, «Հայրենիք» ամսագիր, մաս 4-րդ, 1937, N 4, էջ 144-149, մաս 5-րդ, 1937, N 5, էջ 135-141, մաս 6-րդ, 1937, N 6, էջ 150-153, **Լեվոն Թադէոսյանի** յուշերը, գրի առաւ Ն. Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, 1923, N 7, էջ 176-187, Կարնոյ առաջին դէպքը, «Շերան Ղազարեանի յուշերը», «Դիվան ՀՀ Ղաշնակցության», հատ. առաջին, Պոսթոն,- 1934, էջ 3-10, **Ղեւոնդ Կանտոյեանի** յուշերն, ամփոփեց Արսէն Թերլեմեզեան, «Հայրենիք», ամսագիր, 1956, N 4, էջ 87-97, **Մոզեան Վ.**, Վարդենցիցի Մարգար վարժապետը եւ Աւզուտի դէպքը, «Տարոնի արծիւ», օրգան տարրական ոգու, 1941, N 17, էջ 8-14, **Ֆերաիեան Մ.**, էջ մը անցեալէն «Հայրենիք», 1925, N 1, էջ 130-132, Տե՛ս նաև Յեղափոխական խմբրուններ (1890-1896), «Հայրենիք» ամսագիր, 1953, N 1, էջ 1-14 և այլն:

տեսականորեն «Արմենիաի մէջ նոր զարկ մը տրվեց երկրի շարժումին»⁷², որն իր նպաստը բերեց համախմբվելու գործուն. «Արմենիան ամէն կողմ տարածուած էր եւ՝ «Մշակի հետ՝ երիտասարդութեան մտքին հայրենասիրական թռիչք մը կուտար»⁷³:

Հայ ազատամարտի 1880-ական թթ. մինչև 1896 թ. ներառող Մ. Տամատյանի հուշերի առաջին մասում⁷⁴ անդրադարձներ կան նաև Փորթուզայանին ու «Արմենիա»-ին: «Մեծ հայրենասեր» Մ. Փորթուզայանին հեղինակը մեղադրում է այն բանում, որ «իր յեղափոխական գինիին մէջ շատ քուր խառնած էր, այնպէս որ իր հիմնած «Արմենիա» թերթին ի սկզբան տուաւ չափաւորական ուղղութիւն մը» և որ ինքը «խաղաղ առաջադիմական» էր ու «երկու զաղափարներու միջեւ կտարութեղեր, հայոց զարթունահան ձգտող կէսյեղափոխական ուղղութիւն մը ունէր»⁷⁵:

Թուրք պատմաբանները Հայկական հարցն ու եղեռնի թեման քննարկելով՝ խոսում են նաև հայերի անհնազանդութեան, «ապստամբական» բնույթի, հայրուկային պայքարի և, ընդհանրապէս՝ ազատագրական շարժման զաղափարախոսութեան, դրա մշակողների և ժողովրդի մէջ մամուլի միջոցով տարածողների մասին⁷⁶: Խեղաթուրելով պատմությունը, նրանք հայոց ազատագրական պայքարը համարում են արհեստածին, իսկ հայությանը՝ «անհավատարիմ ազգ»: Ժխտելով իրավագուրկ լինելու ակնհայտ իրողությունը՝ մշում են, որ հայերն իբր դավաճանել են տնտեսական, քաղաքական ու իրավական առաջադիմություն ապրած և Սան Ստեֆանոյում և Բեռլինի վեհաժողովում միջազգային քաղաքականութեան խարդավանքների զոհը դարձած «օսմանյան հայրենիքին»: Թուրքերին ջանադրաբար ձայնակցում են նաև արդրեջանցի կեղծարարներ Մուսա Գասիմլին⁷⁷, Յուսիֆ կըզի Վերդիեան⁷⁸ և ուրիշներ: Դրական է այն, որ վերջին տարիներին իրենց նախկին որոշ դրույքներ վերանայել ու առավել ճշմարտացի տեսակետներ են արտահայտում պատմաբաններ Թաներ Աքչամը, Սելիմ Դերինգիլը, Հալիլ Բերքբայը, Քադիր Աքինը, վերլուծաբան-հրապարակախոսներ Այշե Հյուրը, Մեհմեդ Փուլաթելը, Նազիֆե

⁷² Յուշեր Արմենակ եկարեանի, Պէյրուք, 1985, էջ 7:

⁷³ Նույն տեղում, էջ 23:

⁷⁴ **Տամատեան Մ.**, Իմ յուշերս, խմբագրեց եւ ծանօթագրեց Վաչէ Ղազարեան, Պէյրուք, 1985:

⁷⁵ **Տամատեան Մ.**, մշվ. աշխ., էջ 25-29:

⁷⁶ **Taner Akçam**, *TürkUlusal Kimliği ve Ermeni Sorunu*. Istanbul, 1995, 4-րդ հրատարակություն, 224 էջ. Documents Diplomatiques Ottomans: Affaires Arméniennes (ed. by **Bilâl Şimsir**), vol. 1 (1886-1893). Ankara, 1985, **Yusuf Halaçoğlu**, *Ermenitehciri* (4 baskı). Istanbul, 2004, **Koçaş, Tarih Boyunca**, *Ermenilerve Türk – Ermenilişkileri*. Ankara, 1967, **B.N. Şimsir**, *The Genesis of the Armenian Question*. Ankara, 1983 (Turkish Historical Society, ser. VII, № 84), **YáoŪŶÇ**^a *İngiliz Belgelerinde Osmanlı Ermenileri, 1856-1880*, Ankara, 1986, **Kamuran Gürün**, *Ermeni Dosyası*. Ankara, 1988, **Esat Uras**, *The Armenians in History and the Armenian Question*. Istanbul, 1988, **Mehmed Hocaoglu**, *Arşivvesi kalarıyla Tarihte Ermeni Mezâlimive Ermeniler*, Ankara, Istanbul, 1976, **Hüseyin Nâzım Paşa**, *Ermeni Olayları Tarihi*, kis.1-LV, kis.2-VIII, Ankara, 1994, **Türközu Kemal Halil**, *Osmanlıve Sovyet Belgeleriyle Ermeni Mezâlimi*, Ankara, 1982, **E. Z. Karal**, *Armenian Question (1878 – 1923)*, Ankara, 1975, **YáoŪŶÇ** *Osmanlı Tarihi*, Cilt 8, Ankara, 1988 և այլն:

⁷⁷ **Гасымылы Муса**, Анатолия и Южный Кавказ в 1724-1920-е гг.: В поисках исторической истины, М., 2014

⁷⁸ **Юсиф кзы Жердиева**, Первая Мировая война и Кавказские мусулмани-беженци, журнал «Истина», Астрахань, 2013, № 2, стр. 34-35.

Քոստաբոլլուն և ուրիշներ, որոնք ընդունում են հայերի իրավագուրկ լինելու, հետևապես պայքարելու իրավունքը, ցեղասպանության փաստը և այլն⁷⁹:

Աշխատությունը շարադրելիս «Արմենիա» թերթի քաղաքական բնույթի հրապարակումները համեմատել ենք ժամանակի մամուլում («Մշակ», «Հնչակ», «Դրօշակ», «Մարտ», «Նոր կեանք» և այլն) տեղ գտած տեսակետների հետ և բոլոր դեպքերում մշտապես ելակետ ենք ունեցել ու այդ գնահատականի հիմքում դրել համազգային շահը:

Ավելացնենք, որ չենք կիսում այն հետազոտողների տեսակետը⁸⁰, որոնք խորանուխ չլինելով պարբերականի պատմության մանրամասներում, փորձել են ստվերել «Արմենիա»-ի կարևոր տեղը հայ քաղաքական մտքի ու մամուլի պատմության մեջ, անտեսել նրա ակտիվ դերակատարությունը հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության ձևավորման և զարգացման գործում: Մերժում ենք մեզանում տեղ գտած այն թուր եզրահանգումը, թե իբր «Արմենիա»-ի նպատակն է եղել հայոց ազատագրությանը հասնել բացառապես եվրոպական դիվանագիտության օգնությամբ: Թերթի հրապարակումների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գերիշխող է եղել հակառակ դիրքորոշումը: Ավելին, Մ. Փորթուզալյանի կարծիքով, ազատագրական շարժման ղեկավարությունը ժողովրդի մեջ ու նրա հետ պետք է լինեն, այնինչ, երբեմն նրանց մեծ մասը նույնիսկ Հայաստանում չէին եղել: Իհարկե, Մ. Փորթուզալյանը դեմ չէր եվրոպայի օգնությանն ու դիվանագիտական աջակցությանը, սակայն կոչ էր անում նախ և առաջ հույսը դնել սեփական ուժերի վրա: Այնպես որ, «Արմենիա»-ն հայ քաղաքական մտքի վրա խորը ու անջնջելի դրոշմ է թողել և պարունակում է շատ ուսանելի դրույթներ, որոնք այսօր էլ արդիական են ու կիրառելի: Իսկ անճշտությունները հետևանք են այն բանի, որ երբևէ «Արմենիա»-ի պատմությունը խորությամբ չի հետազոտվել:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, բովանդակությունից, հինգ գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 400 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ ներկայացված է թեմայի արդիականությունը, ցուց են տրված ատենախոսության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, նշված են հետազոտության նպատակները և խնդիրները, ժամանակագրական շրջանակները, տրված է հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը:

ԳԼՈՒԽ ԱՈՒԱԶԻՆ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆՆ ԱՐԵՎՄՏԱՅԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱՉԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՇՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Առաջին ենթագլուխ – Մ. Փորթուզալյանի կյանքը և մանկավարժական գործունեությունը:

⁷⁹ Տե՛ս նույն հեղինակների վերը նշված աշխատությունները:

⁸⁰ **Ավետիսյան Վ.**, Հայ հասարակական մտքի զարգացման Մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Ե., 1976, **Լեօ**, Անցեալից, Թիֆլիս, 1925, նույնի, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Ա, Փարիզ, 1934, **Համբարյան Ա.**, Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, **Վարդանյան Հ.**, Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դ. վերջին քառորդում, Ե., 1967, **Պարսամյան Վ.**, Պատմագիտական աշխատություններ, Ե., 1985, **Ղազարյան Հ.**, Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Ե., 2001 և այլն:

Բեռլինի վեհաժողովից հետո մեծ տերություններից հուսախաբ արևմտահայությունն սկսեց նոր ուղիներ փնտրել օսմանյան բռնատիրությունից ազատագրվելու համար և հանգեց «Երկաթե շերտի»⁸¹, այն է՝ սեփական ուժին կոթնելու գաղափարին: Արևմտահայության ազատության խնդրով մտահոգ մտավորականության համար հստակ էր, որ կազմակերպվելու և ժողովրդին պայքարի դուրս բերելու համար նախ հարկավոր էր վերափոխել նրան հոգեբանորեն՝ սերմանել դարավոր լուծող թոթափելու և ազատ ապրելու ձգտում: Այդ զարթոնքն ապահովելու համար անհրաժեշտ էր նախ կրթել, ազատասիրական ոգով դաստիարակել և նախապատրաստել հեղափոխական սերունդ: Այդ հայրենանվեր առաքելության ակունքներում էր կանգնած Մ. Փորթուզալյանը: Մարդ, ով ամբողջ կյանքը թեև նվիրաբերեց հայության ազատագրության գործին, սակայն չի արժանացել ուսումնասիրողների անհրաժեշտ ուշադրությանն ու զնահատանքին⁸¹ չհաշված այն դեպքերը, երբ հպանցիկ անդրադարձել են ու հիշատակել նրա գործունեությունն ու դրա զարդապսակ «Արմենիա»-ն⁸²:

Ժամանակի ազդեցիկ լրագրերին ակտիվ թղթակցելու, «Վարագդատեան», «Արարտեան» և այլ ընկերություններ հիմնադրելու, «Ասիա» թերթը խմբագրելու, կրթակազմակերպչական և հրապարակախոսական գործունեության արդյունքում Փորթուզալյանը շուտով դարձավ Մ. Խրիմյանի, Գ. Սրվանձոյանի, Գ. Օտյանի, Ն. Վարժապետյանի համախոհ ու գործընկերը, իր ամենակտիվ մասնակցությունը բերելով հայոց ազգային-քաղաքական զարթոնքի գործընթացին:

Գ. Արծրունու և Բաֆֆու խնդրանքով Մ. Փորթուզալյանն անցնում է Վան և ակտիվ մասնակցում սկսված հայ ազգային-ազատագրական պայքարի առաջին շրջափուլին, երբ վանական վարդապետը տեղի էր տալիս աշխարհիկ ուսուցչին: Այստեղ նա հիմնում է մի քանի կրթօջախներ, որոնց զարդապսակը Կեդրոնական վարժարանն էր: Մ. Փորթուզալյանի գլխավորությամբ այս կրթարանից դուրս եկավ հեղափոխականների մի կոհորտա, որը ոչ միայն պարզեց ազատության դրոշը և հիմնադրեց Արմենական կուսակցությունը, այլև կերտացավ 1896 և 1915 թթ. գոյամարտերի ժամանակ՝ ոչնչացումից փրկվելով Վասպուրականի հայությանը:

Երկրորդ ենթագլուխ – Մ. Փորթուզալյանի դերն արևմտահայ ազգային-ազատագրական շարժման գաղափարաբանության ձևավորման գործում:

Մ. Փորթուզալյանի ազատասիրական մղումներն ու գործունեությունը չէին կարող անկատ մնալ իշխանությունների ամենատես աչքից: Նրանք սկսեցին ամենուրեք հետապնդել նրան: Խուսափելով ձերբակալությունից՝ նա վտարոնդվեց ու Մարսել քաղաքում հիմնադրեց «Արմենիա» թերթը: Սկսվեց արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի երկրորդ փուլը, որը դարձակետ եղավ Մ. Փորթուզալյանի ճակատագրում. կրթական գործի մշակ ուսուցիչը դարձավ խմբագիր, ապա՝ հեղափոխության քարոզիչ:

⁸¹ Բացառություն են կազմում Մ. Փորթուզալյանի գործունեության 40 և «Արմենիան» թերթի լույսընծայման 25-ամյա հոբելյանների առթիվ **Տ. Չեօկիւրեանի** խմբագրությամբ «Քառասուն տարուան աշխատաւորը Մկրտիչ Փորթուզալեան» Յարգանքի պսակ քառասնամեայ յոբելյանի առթիւ հողվածների ժողովածուն, Կ.Պոլիս, 1914, **Ռ. Թորոսեանի** հեղինակած «Ռ՛՛մ է Մկրտիչ Փորթուզալեան» Կ.Պոլիս, 1912, գրքուկը և մի քանի հրապարակումներ մամուլում:

⁸² Սեղմագիրն ավելորդ չծանրաբեռնելու համար ձեռնպահ ենք մնում այդ հեղինակներից ու նրանց աշխատությունները թվարկելուց, քանի որ նրանց մասին մանրամասն խոսել ենք Ներածությունում:

«Արմենիա»-ն դարձավ այն դարբնոցը, որտեղ ծնվեցին, կոփվեցին ու ժողովրդին մատուցվեցին Փորթուզալյանի ազատախոհական գաղափարները: Հայրենասեր հրապարակագիրը եղավ հայության մեջ ինքնավստահություն առաջին ներշնչողներից մեկը: Գրիչը զենք ունենալով և գործելակերպը գաղափարակիցներ պատրաստելն ու ուժ գոյացնելը՝ նա արեց ամեն ինչ՝ ժողովրդին սթափեցնելու և իր ունահարված իրավունքներին տեր դարձնելու համար: Փորձեց հայերին վերադարձնել կիրթ և ազատության ձգտող ազգերի շարքը, ձերբագատել նրան խոնարհ ռայայի հոգեկերտվածքից: Նրա մեծագույն ներդրումը եղավ այն, որ պատրաստեց «ազատագրութան մարտիրոսների» մի ողջ սերունդ, որը պատրաստ էր նահատակվելու հանուն հայրենիքի: Մ. Փորթուզալյանը ցնցեց ժողովրդին, հնչեցրեց հեղափոխության հուժկու ռազմերգը և մղեց պայքարի՝ իր ողջ կյանքը դարձնելով ուսանելի օրինակ:

Ազգային զարթոնքի և բռնության շղթաները խորտակելու ձգտումները ժողովրդի մեջ սերմանելու և հայրենիքն ազատ տեսնելու սուրբ գործի նվիրյալին բարձր են գնահատել Դանիել Վարուժանը, Վահան Թեքեյանը, Գարեգին Խաժակը, Միքայել Նաթանյանը, Ասքանազ Չթչյանը, Պազիկ Խանը, Թեօդիկը, Շահիրիմանը և ուրիշներ⁸³:

ՉԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

«ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐԵՐԱԿԱՆԻ ԾՆՈՒՆԴՆ

Առաջին ենթագլուխ - «Արմենիա» թերթի «Շրջաբերական»-ը:

1885 թ. հունիսի 18-ին «Արմենիա»-ի խմբագրակազմը՝ նախքան թերթի լույս ընծայումը, տարածեց մի շրջաբերական, որում հայտարարեց, որ թերթը քաղաքական չէ և ներկայացրեց իր առջև դրված հիմնախնդիրները: Դրանք էին՝

ա) կապ ստեղծել աշխարհասփյուռ հայության բոլոր հատվածների միջև՝ հետազայում դրանք ամրապնդելու և խորացնելու տեսլականով,

բ) համակարգել այդ ուժերը և դրանք ուղղորդել հօգուտ հայանպաստ գործերի,

գ) օգտվելով Ֆրանսիական հանրապետության ազատ և մարդասիրական օրենքների ընձեռած հնարավորությունից, հաստատել այնտեղ հայկական տպարան, միաժամանակ հարգել Թուրքիայի, Ռուսաստանի և Պարսկաստանի օրենքները:

Այնուհետև ավելացվում էր, որ թերթը չի զուսնագրորդի հայության վիճակը, որովհետև կեղծ լավատեսությունը դավաճանություն կլինի ազգային շահերին, իսկ նրա նյութական ու մտավոր անկումը կհանգեցնի նաև բարոյական անկման և հուսախաբություն կառաջացնի: Հայտարարվում էր նաև, որ «Արմենիա»-ն կրոնական թերթ չէ, ակայն, նկատի առնելով այն հանգամանքը, որ հայոց եկեղեցին դարեր շարունակ փոխարինել է պետությանը, կհարգի այն: Թերթը լինելու էր հարստահարված և ծայնագուրկ հայության պաշտպանը և հանդես էր գալու «Ազգային Սահմանադրության» բարեփոխման պահանջով, դատապարտելու էր եկեղեցական վերնախավին և հարուստներին, որոնք, հարստահարում էին ժողովրդին և խեղդում «ազատ մտածումները»: Այնուհետև վստահեցվում էր, որ «Արմենիա»-ն լինելու էր ժողովրդին նվիրված ազատական թերթ:

Երկրորդ ենթագլուխ - Պարբերականի ընդհանուր նկարագիրը:

⁸³ Տես **Չեօկիրեան Տ.**, Կենսագրական գծեր, Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պօլիս, 1914, Թորոսեան Պ., Ո՛վ է Սկրտիչ Փորթուզալեան, Կ. Պօլիս, 1912, «Աւետաբեր», «Կոչնակ», «Ազատ Բեմ», «Արաքս» և այլ պարբերականներում տպագրված հոդվածներ:

Թերթն ուներ «Խմբագրականներ», «Նամականի», «Հայկական հարց», «Գաղթաշխարհ», «Մամուլ», «Քանասիրական», «Գովազդ»-ի, «Հայտարարություններ»-ի և այլ կայուն խորագրեր ու բաժիններ:

«Խմբագրականներ»-ն հիմնականում գրում էր Փորթուգալյանը: Դրանք միջազգային իրադրության, Օսմանյան կայսրությունում տիրող կացության, հայության գոյավիճակի, Հայկական հարցի, աշխարհամարտի, Կամավորական շարժման, Մեծ եղեռնի, հայոց պետականության վերստեղծման իրատեսական մոտեցումների, այդ ծանր վիճակից դուրս գալու մասին տազնապալի, սակայն միշտ լավատեսական և ապագայի նկատմամբ անհողողո՞ղ հավատով տոգորված վերլուծություններ էին:

Գողտրիկ, ընթերցողների կողմից սիրված ու ցավաշատ **«Նամականի»**-ն ամենօրյա անարդարությունների, հայ գյուղացու տառապանքների, իրավազուրկ վիճակի ու անպի կարոտի մասին էին տեղեկացնում Արևմտյան Հայաստանից ու հայաշատ բոլոր անկյուններից ուղարկված նամակները: Այս խորագրի նյութերը ներկայացնում էին ավանդական ու նոր բարքերի հակադրությունում մոլորված հայ մարդու ողբերգությունը, եղեռնի մահասարսուռ տարիները և օգնություն աղերսող ճիչերը, ինչպես նաև հայության կյանքում գոյություն ունեցող արատավոր երևույթները:

Դիվանագիտական անցուդարձը, պետականության բացակայության պայմաններում այդ գործառույթը իրականացնող եկեղեցու գործունեությունը, ընդ որում, չհանդուժելով նրա սպասավորների ընչաքաղցությունն ու իշխանությունների հետ գործարքների գնալու դեպքերը, հայտնի քաղաքական գործիչների հայությանը վերաբերող տեսակետները և այլ հարցեր տեղ էին գտնում **«Հայկական հարցը» բաժնում**: Հայկական հարցի վերաբացմանը զուգընթաց և հատկապես աշխարհամարտին հաջորդած տարիներին այս խորագիրը թերթում դառնում է կարևորագույններից մեկը:

«Գաղթաշխարհ» խորագրի ներքո տպագրվում էին ազատության պայքարին սատարելու պատրաստակամության մասին թղթակցություններ: Ժողովրդին նյութապես օգնելու առումով թերթի նշանակետ գաղթաշխարհի հայությանն հասցեագրվում էին կոչեր միշտ հայրենիքի կողքին լինելու մասին: Եղեռնից հետո այս բաժնի նյութերում ահագնացող ցավ կա, բայց նաև՝ հույս և աներեր հավատ ապագայի հանդեպ:

«Մամուլ» բաժնում արտասպումների, թարգմանությունների ու վկայակոչումների միջոցով քննարկվում էին հայությանը հուզող հարցեր: Այստեղ «Արմենիա»-ի արձագանքներն են այլ թերթերի քննադատական հրապարակումների, որոնցում սակայն ոչ մաղձ կա, ոչ էլ վիրավորանք հեղինակների հասցեին:

Թերթի **«Քանասիրական» բաժինը** հարուստ էր գեղարվեստական ոչ ծավալուն ստեղծագործություններով և, հատկապես՝ գրախոսական-վերլուծականներով: Կան նաև մեծածավալ ստեղծագործություններ, որոնք տպագրվում էին մաս-մաս թերթի տարբեր համարներում:

«Գովազդ» բաժնում առկա էին տարբեր բովանդակության ծանուցումներ հայտարարություններ և առաջարկներ: Ետեղեռնյան տարիներին շատ են կորած հարազատներին փնտրելու մասին հայտարարությունները:

Գիտակցելով, որ թերթն ընթերցանության նկատմամբ սեր ներարկելու, ժողովրդին հուզող խնդիրները բարձրացնելու և ազատության համար պայքարի դուրս բերելու կարևոր գործոն էր, Փորթուգալյանը նյութական մեծ զոհողությունների գնով լույս էր ընծայում «Արմենիա»-ն: Առաջին ամիսներին նա չէր հակադրվում Օսմանյան կայսրությանը, այլ միայն ընթերցողին ծանոթացնում

եր հայության ծանր վիճակին: Թերթը ձեռքից-ձեռք էր անցնում, վարակում ու ոգևորում հայ մարդկանց և ոգեկոչում պայքարի: Կախված հանգամանքներից և դրամի չափից՝ «Արմենիա»-ն լույս էր տեսնում շաբաթը երկու անգամ, 800-1300 տպաքանակով: 1893 թ. տպվելներով այն տարածվում էր՝ Պարսկաստանում 166 օրինակ, ԱՄՆ 75, Ռումինիա՝ 37, Բուլղարիա՝ 27, Գերմանիա՝ 27, Եգիպտոս՝ 19, Ֆրանսիա՝ 22, Մեծ Բրիտանիա՝ 17, Հունաստան՝ 8, 100 օրինակ էլ հատավաճառքի միջոցով⁸⁴: Տպաքանակի վրա բացասականորեն անդրադարձան օսմանյան, ռուսական և պարսկական տերությունների տարածքներ թերթի մուտքի արգելման հրամանագրերը, սակայն այն զաղտնի թափանցում էր նաև այդ երկրներ և 1890-ական թթ. ամենատարածված հայալեզու պարբերականն էր⁸⁵:

«Արմենիա»-ն լույս տեսավ մինչև 1923 թ.: Պարբերականի երկարակեցությունը նպաստում էր «Արմենիաի օժանդակներ» կառույցը: Թերթի լեզուն աշխարհաբար էր: Աչք է շոյում անթերի սրբագրական աշխատանքը: Բոլորին վերափոխելու հավակնող թերթն անտարբեր չէր նաև արևելահայության կյանքին:

Երրորդ ենթաբաժուխ - «Արմենիա» - Փորթուզայան - Արմենական կուսակցություն ամնչությունները:

Պատմագիտության մեջ տևական ժամանակ սխալմամբ Արմենական կուսակցության հիմնադիր է համարվել Մ. Փորթուզայանը⁸⁶: Իրականում նա եղավ այդ կուսակցությունը ստեղծման գաղափարի սերմնացանը, որովհետև Վանից արտաքսված լինելու հանգամանքը նրան թույլ չտվեց այդ գործընթացի ամնիջական իրականացնողը դառնալ: Այդ են վկայում շատ հուշագիրներ⁸⁷ և վերջին շրջանում՝ հետազոտողների մեծ մասը⁸⁸: Արձանագրենք, որ

⁸⁴ Արմենիաի տարածումը, «Արմենիա», № 83, 1893:

⁸⁵ Նույն տեղում:

⁸⁶ **Լազեան Գ.**, Հայաստան և Հայ Դատը (վավերագրեր), Կահիրե, 1956, էջ 105-108, **Լեօ**, Անցեալից, Թիֆլիս, 1925, էջ 47-49, **Լեօ**, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հատ. Ա, Փարիզ, 1934, էջ 44, **Պարսանյան Վ.**, Պատմագիտական աշխատություններ, Ե., 1985, էջ 211, **Ավետիսյան Վ.**, Հայ հասարակական մտքի զարգացման Մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Ե., 1976, էջ 161-162, **Սերոբեան Ս.**, Հայկական հարցը և անոր փուլերը, Պէյրոս, 1937, էջ 98-99 և Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, Կահիրե, 1948 թ., էջ 184, **Իզմիրեան Կ.**, Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս, Պէյրոս, 1964, էջ 124-126, **Համբարյան Ա.**, Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, էջ 123, **Վարդանյան Հ.**, Արևմտահայերի ազատագրության հարցը և Հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Ե., 1967, էջ 287, **Կիրակոսյան Ջ.**, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Ե., 1980, էջ 245, **Գազանճեան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի, Բոստոն, 1950, էջ 210 և ուրիշներ:

⁸⁷ **Դարբինյան Ա.**, մշվ. աշխ., **Եկարեան Ա.**, մշվ. աշխ., **Երամեան Հ.**, մշվ. աշխ., **Փափազեան Վ.**, մշվ. աշխ., **Թերլեմեզյան Փ.**, «Կյանքիս հուշերը» (մեքենագիր), Հայաստանի պետական պատկերասրահ, հուշածեռագրային բաժին, ֆ. 60, տ. 11, թղթ. 27, 28:

⁸⁸ **Ղալաքյան Կ.**, «Արմենականություն» և Սահմանադրականության հետ ՌԱԿ-ի առնչությունների հարցի շուրջ, Թեզիսներ Արմենական կուսակցության 110 ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի (12 մարտի 1996թ.), Ե., 1996: **Ղազարեան Վ.**, Արմենական կուսակցությունը, Պէյրոս, 1985: **Նաթանեան Մ.**, Արմենական կուսակցությունը ծագումէն սկսեալ մինչև Սահմանադրական ռամկավար կուսակցութեան կազմութիւնը, Գահիրե, 1990: Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ 1885-1914թթ., **Է. Կոստանդյանի** խմբագրությամբ, Ե., 2003: **Սարգսյան Ս.**, Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2008: **Կարապետյան Ա.**, Արմենական կուսակցություն, թեկնածուականատեքնախոսության սեղմագիր, Ե., 1995:

կուսակցությունը հիմնադրեցին Կեդրոնական վարժարանի սաները՝ Սկրտիչ Ավետիսյանի առաջնորդությամբ:

Զնայած Մ. Ավետիսյանի հետ ունեցած բարեկամությանը՝ Մ. Փոթրուզայանն արմենական չդարձավ, հայտարարելով, թե դեմ է կուսակցականությանը, որովհետև դա կթուլացնի ազատագրական պայքարը և «վնասակար ու խիստ վտանգավոր է տաճկահայոց շահերին»⁸⁹: Ի վերջո՝ «պաղուփուն մը ինկավ վարպետին եւ երբեմն իւր անունով երդուող աշակերտներուն միջեւ»⁹⁰ և նրա պահվածքից դժգոհ՝ արմենականները երես դարձրին Փոթրուզայանից և սկսեցին մերժենալ այլ ուժերի:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒԼՈՒՄՆ «ԱՐՄԵՆԻԱ»-ՈՒՄ

Առաջին ենթազուխ - Արևմտյան Հայաստանում տիրող ծանր կացության արտացոլումն «Արմենիա»-ում

Անկողմնակալ, կուսակցականության պարտադրանքներից ազատ «Արմենիա»-ն լուսաբանում էր թուրքական իշխանությունների իրականացրած հարկային ծանր քաղաքականությունը հայության նկատմամբ, որը մշտապես ուղեկցվում էր բռնարարքներով, չարաշահումներով և սպանություններով. «բոլորը միացած խեղճ հային քարշ են տալիս դէպի կորուստ»⁹¹: Նվաճելով Հայաստանը՝ թուրքերը «կանգնեցրին հայկական քաղաքակրթութան զարգացումը և նորան դարերով յետ մղեցին»⁹²: Թերթի ներկայացմամբ՝ նրանք որոշել էին հենց իր բնուն խեղդել հայ ժողովրդին ու անուն էին ամեն ինչ նրան տնտեսապես տկարացնելու և արյունաքամ անելու համար: Զկարողանալով դիմանալ մի քանի դար շարունակվող բռնությանը՝ հայ ժողովուրդն աստիճանաբար սկսել էր «գաղթել տնովին»: Իշխանությունները ժողովրդագրական կտրուկ փոփոխությունների պատրվակով, «Հայաստան» անունը փոխարինել էին «Քուրդիստանով»: Մինչդեռ «Արմենիան» անկախ վիճակագրական տվյալներով ապացուցում էր, որ այդ փոփոխությունը սխալ ու անհիմն է: Թերթի ներկայացմամբ Արևմտյան Հայաստանի շուրջ 2 մլն. բնակչության 1,5 մլն.-ը հայեր էին, 410 հազարը թուրքեր և քրդեր ու մնացած ազգությունները միասին՝ հազիվ 175 հազար էին ⁹³: «Մասնավորաբար՝ Էրզրումի, Ալաշկերտի և այլնի մէջ կելնէ 390,000 Հայ՝ 80 հազար Թիւրքի և 10,000 Քիւրդի դէմ. Վանի մէջ 154,000 Հայ կայ 15,000 Թիւրքի և 21,000 Քիւրդի դէմ. Մուշի մէջ 118,000 Հայ կայ 25,000 Թիւրքի և 10000 Քիւրդի դէմ և այսպէս մնացածը»⁹⁴:

Իշխանություններն այնուհետև փակեցին ազգային վարժարանների մեծ մասը՝ փորձելով սպանել հայության ազատատենչ ձգտումները: Տեսնելով հայերի «անհնազանդությունը»՝ նրանք դիմում էին ահաբեկումների ու ձերբակալությունների, հետապնդում նույնիսկ անմեղ մարդկանց. «կլորօրէն կը ձերբակալէն աջ ու ձախ որի որ պատահի»⁹⁵: «Արմենիա»-ն պարզաբանում էր ստեղծված ծանր կացությունը և առաջ էր քաշում միավորվելու անհրաժեշտության գաղափարը: Հայ ժողովրդի այդ զարթոնքն ու հեղափոխական տրամադրությունները

⁸⁹ ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 4, թ. 13, տես նաև «Պայքար», 1951, մարտի 17, թիվ 63:

⁹⁰ Երամեան Հ., Հուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա., 1929, էջ 255:

⁹¹ «Արմենիա», թիվ 98, 1889:

⁹² «Արմենիա», թիվ 85, 1889:

⁹³ «Արմենիա», թիվ 17, 1889:

⁹⁴ «Արմենիա», թիվ 96, 1889:

⁹⁵ «Արմենիա», թիվ 101, 1889:

կանխելու և ճշմարտությունը եվրոպայից թաքցնելու նպատակով իշխանությունները դիմում էին նաև խաբեության: Դրանցից էր հանրագրերին դիմելու խայտառակ պատմությունը, որը նշան էր արդեն «թե՛ նա բոլորովին նեղը մնացեր է Յայենական խնդրի առջե՛ս»⁹⁶: Յայերի բողոքները խեղդելու համար՝ նրանք կաշառում էին «փառատենչիկ Յայ էֆենտիներն», դրամական ցվերների ու շնորհների ուժով ստիպում, որ Պատրիարքարանը «Եվրոպաբնակ մեր եղբարց հրապարակային տրտունցներն հերքե՛ պաշտօնապէս»⁹⁷ և այլն:

Երկրորդ ենթագլուխ - Յայ իրականության և հանրային կյանքում գոյություն ունեցող թերությունների քննադատությունն «Արմենիա» թերթում:

«Արմենիա»-ի բնորոշմամբ հայերը խաղաղասեր, անկախության գաղափարի մշտական կրող, աշխատասեր, հավատավատարիմ, ճարպիկ, ստեղծագործ, վաճառական, արհեստավոր, բանկիր, դիվանագետ և շինարար ժողովուրդ են:

Որպեսզի հայ ժողովուրդը կարողանա բռնապետությունից ազատվելու համար պայքարել, հստակ պիտի իմանա իր երկիրը օտարի կողմից նվաճելու օբյեկտիվ պատճառները, խուսափի ուրիշներին մեղադրելուց և ճանաչի սեփական թերությունները: Ինչպիսիք էին օրինակ՝ ա) օտարի տիրապետությունը երկար հանդուրժելը, բ) անգրագիտությունը և սոցիալական ծանր վիճակը, գ) հայալեզու մամուլի բացակայությունը, դ) նվազ թվաքանակը, ե) քաջ, կազմակերպական հատկանիշներով օժտված գործիչների երկրից հեռանալը, զ) «հայերու մէջ գօրութեան ոգին կոտրած» և կիսավայրենի ցեղերի հարևանությունը, է) թշնամու դեմ միասնաբար չպայքարելը, ը) հալածանքների հետևանքով թափառական դառնալը, քանի որ «գաղթականութիւնը ոչ միայն ինքնասպանութիւն էր հայու համար, այլ և ազգասպանութիւն»⁹⁸, թ) մեծ տերությունների շահերի հորձանուտում չկողմնորոշվելը, ժ) անտարբերությունն ու բամբասանքի ախտը, ի) «Յայ ազգ կանուանուէին սոսկ լուսաւորչական Յայերը»⁹⁹, յա) սեփական սխալների անգիտացումը, լ) միամիտ ու դյուրահավատ լինելը, կ) դիվանագիտության չիմացությունը, հ) առանց լուրջ նախապատրաստության վճռական քայլեր կատարելու սովորությունը, ճ) սեփական համոզմունքների նկատմամբ անվստահությունը և հուսահատվելու միտումը, դ) փառասիրությունը, Վ) օտար փեթրում հոխորտալը, որով թուրքական իշխանություններին գազազեցնում էին և բաց թողնում երկիրը պահող անպաշտպան ժողովրդի վրա, շ) եղբայրասպան և ուժերը ջլատող երևույթները և այլն: Ազգին ինքն իրեն ճանաչել տալը, սխալները շտկելու անհրաժեշտության գիտակցումը ևս «Արմենիա»-ի մեծագույն ավանդն էր:

Երրորդ ենթագլուխ - Արևմտահայության դրության արտացոլումն «Արմենիա»-ի «Նամականի»-ում:

«Արմենիա»-ն հայ իրականության մեջ առաջին պարբերականն էր, որը մեծ տեղ էր հատկացնում ընթերցողների նամակներին: «Նամականիի»¹⁰⁰ աշխարհագրությունն ընդգրկում էր երկրագնդի բոլոր հայաշատ երկրները: Ավելի շատ,

⁹⁶ «Արմենիա», թիվ 81, 1889:

⁹⁷ «Արմենիա», թիվ 78, 1889:

⁹⁸ Գաղթականութեան վտանգներ, «Արմենիա», թիվ 22, 1893:

⁹⁹ Յայ ազգը եւ եկեղեցին, «Արմենիա», թիվ 2, 1906:

¹⁰⁰ Այս խորագրի ներքո տպագրվում էին ոչ միայն ընթերցողների, համակիրների, այլև թերթի տեղական, արտահաստիքային թղթակիցների նամակ-թղթակցությունները, որոնք բոլորն էլ պատշաճ տեսքի էին բերվում ու սրբագրվում խմբագրակազմի կողմից:

ճանակներ ստացվում էին Արևմտյան Հայաստանից, մասնավորապես՝ Վանից: Դրանք աշխարհին տեղեկացնում էին հայերի սոցիալական ծանր կացության ու անելանելի վիճակի մասին:

Գաղտնի ծառայություններն ամենուր հայ հեղափոխականներ փնտրելու պատրվակով դաժանաբար սհաբեկում էին ժողովրդին և շատերը «չկարենալով դիմանալ տոսկալի տանջանաց, մեռած էին»¹⁰¹: «Նամականի»-ի ներկայացմամբ, այն վիլայեթները, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում, բնակեցվում էին զաղթականներով, ծանրացվում հարկերը, անպատիժ թողնվում քրդերի բարբարոսությունները, հալածվում ամեն մի առաջավոր միտք, անարգվում եկեղեցին, «պաշտօն և արծաթ տալով մատնիչներին Հայ հասարակությունը աւելի անբարոյականացնում»¹⁰²: Իսկ երբ հայերը փորձում էին բողոքել, պաշտոնյաները լչտիաբար հայտարարում էին՝ «Սուլթանը արտոնում է Հայերը ջնջելու»¹⁰³:

Նամակներն սկզբում սոցիալական բովանդակություն ունեին, հետագայում հայտնվեցին քաղաքական պահանջներ, երբեմն էլ՝ պայքարի կոչեր: Նամակագիրները շեշտում էին նաև, որ հայության ազատ ապրելու ձգտումը ավելի կազմակերպված բնույթ էր ստանում: Նամակների մեծ մասը, զգուշությունից ելնելով, ստորագրվում էին ծածկանուններով: «Նամականի»-ն ներկայացնում էր երկու դարերի սահմանագծին բարիկաղի տարբեր կողմերում հայտնված ուժեղ Օսմանյան կայսրության և թույլ ու անկազմակերպ հայ ժողովուրդին և նրանց միջև «ուլ-ումի» բախտորոշ հարցը: Շեշտում, որ իշխանությունները հայությանն իրենց բնօրրանից դուրս մղելու համար ձեռնարկեցին մի շարք քայլեր. ա) աննախադեպ խստացրին հարկերը, խլեցին ու յուրացրին մեծաքանակ հայապատկան հողեր, որի արդյունքում հայերը հոծ խմբերով արտագաղթում էին, բ) հովանավորվում էին քրդերի ապօրինությունները, գ) քարոզվում էր կրոնական անհանդուրժողականություն, դ) փակվում էին հայկական կրթօջախներն ու թերթերը, հալածվում հոգևորականությունը, ե) հայերին ոչնչացնում էին, զ) միջազգային հանրությանը հավատացնում էին, թե հայը ապստամբ է, դրա համար են պատժում:

Այս ամենին «Նամականի»-ն փորձում էր հակադրել վերափոխումների ծրագիր և հայությանը կոչ էր անում լավ նախապատրաստվելուց հետո միայն դուրս գալ պայքարի: Այն XIX դարավերջի և XX դարի առաջին երկու տասնամյակների հայ իրականության կենդանի հուշարձան է, փաստառատ ու վստահելի սկզբնաղբյուր, մի կողմից հայի հոգու ճիչ, խտացած ցավ, բողոք ու պարսավանք անօրենների հասցեին, իսկ մյուս կողմից՝ հայության երազանքների շտեմարան, զորավոր հավատ՝ ապագայի նկատմամբ:

ԳԼՈՒԽ IV

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂԱԲԱԿԱՆ ԿԱՐԳՎԻԾԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏՆ «ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԷԶԵՐՈՒՄ

Առաջին ենթագլուխ - Մ. Փորթուգալյանի աշխարհայացքային մոտեցումներն արևմտահայության ազատագրության խնդիրներին:

Մ. Փորթուգալյանի կյանքն ու գործունեությունը լավ ուսումնասիրված չլինելու պատճառով նրա գաղափարախոսությունը հայ պատմագիտության կողմից ըստ արժանվույն չի գնահատվել: Իսկ «պահպանողական», «քամելեոն», «ժամանակէն ետ մնացած» և նմանատիպ այլ գնահատականներն ուսումնասիրված աղբյուրների նյութերով չեն հաստատվում:

¹⁰¹ «Արմենիա», թիվ 13, 1890:

¹⁰² «Արմենիա», թիվ 13, 1890:

¹⁰³ Նույն տեղում:

Իրեն Օսմանյան կայսրության հավատարիմ հպատակ համարող Մ. Փորթուզայանը միամտաբար կարծում էր, որ եթե հայությանն հալածելու մասին սուլթանն իմանա, ամեն ինչ կփոխի և փորձում էր դա անել «Արմենիա»-ով: Նա հայոց կարգավիճակը Ստ. Նազարյանի նման, երկարամտ էր պատկերացնում: Հային քաղաքականապես թուրք էր համարում, մշակույթով՝ հայ և փորձում հաշտեցնել համապետականն ու ազգայինը: Ժխտում էր արտաքին դիմորոշումն ու հային կաղապարում-պահում կայսրության մեջ և նրանից ակնկալում վիճակի բարելավում:

XIX դարի 80-ական թթ. հայ ազատախոհ գործիչները հիմնականում համախմբվել էին երեք պարբերականների շուրջ և դավանում էին նրանից ուղղություններին: Լոնդոնի «Հայաստանը», որին ձայնակցում էր Վառնայի «Իրավունքը»¹⁰⁴, մերժելով հեղափոխության միջոցով հայ ժողովրդին ազատագրելու թեզը, որդեգրել էր մեծ տերություններին դիմումներ հղելու և նրանցից օգնություն ակնկալելու գործելակերպը: Մյուսները՝ «Հնչակ»-ն ու «Դրօշակ»-ն էին, որոնք եվրոպական առաջադիմական գաղափարախոսություններից ազդվելով՝ որդեգրել էին հեղափոխության ուղին: Քանի որ Մ. Փորթուզայանը հստակ և ավարտուն տեսքով մշակված ուղղություն չունեի, «Արմենիա»-ում միմյանց կողքին հանդես էին գալիս տարբեր քաղաքական դավանանքների տեր անձինք: Մի դեպքում հանդես գալով «հավատարիմ օսմանյան քաղաքացու», մյուս դեպքում՝ ապստամբության և զենքի ուժով ազատություն նվաճելու, ինչպես նաև՝ մեծ տերություններին դիմումներ հղելու կոչերով՝ «Արմենիա»-ն լողում էր մշակած ուղղությունների միջև:

Կարճ ժամանակ անց Փորթուզայանը հիասթափվեց իշխանություններից և հայ ժողովրդին կոչ արեց բարձրացնել ձայնը ինքնապաշտպանվելու համար: Նրա քաղաքացիական պարտքի գիտակցումն ու նվիրվածությունն սկսեցին երերալ: Այն բանից հետո, երբ թերթի մուտքը թուրքիս և Ռուսաստան արգելվեց, «Արմենիա»-ի առաջին համարների խոհեն ու զգուշավոր լեզուն փոխվեց՝ դարձավ սուր ու փշոտ: Փորթուզայանն աստիճանաբար համոզվեց այն պարզ ճշմարտության մեջ, որ սուլթանն ինքն է հարստահարողն ու սպանողը: Նրա համար ակնհայտ դարձավ, որ արյունով ու ավազակությամբ ստեղծած Օսմանյան կայսրության ողջ պատմությունը որևէ հույս չէր ներշնչում, որ նրանք կփոխվեին: Բարենորոգումներ կատարելու նրանց բոլոր փորձերն անհաջող բեմականացված ներկայացումներ էին և կատարվում էին սոսկ արտաքին աշխարհին խաբելու համար: Թուրքերը համոզված էին, որ եթե հայերը զենք կրելու իրավունք ստանային և ինքնավար դառնային, Բուլղարիայի նման կվտանգեին իրենց պետության գոյությունը, դրա համար էլ անում էին ամեն ինչ, որ հայը «վերանայ աշխարհի երեսն»¹⁰⁵: Հետևաբար, միայն «Հայաստանցի Հայր և ոչ ուրիշը...»¹⁰⁶ պիտի լուծեր Հայկական հարցը: Հոգեբանական ու քաղաքական այս մթնոլորտում Մ. Փորթուզայանի հայացքներում կտրուկ շրջադարձ կատարվեց: Նրա մոտ ծնվեց հեղափոխություն բարձրացնելու գաղափարը:

¹⁰⁴ Մինչ «Արմենիա»-ի լույս ընծայումը, 1885 թ. սկզբներից շաբաթը երկու անգամ, հայերեն և ֆրանսերեն լեզուներով Բուլղարիայի Վառնա քաղաքում լույս էր տեսնում ազգային, հասարակական-քաղաքական «Իրավունք» թերթը, որն ըստ էության, ազատախոսական թերթերի առաջնեկն է: Սակայն փոքր տպաքանակն ու հետևորդների խիստ սակավ լինելը թույլ են տալիս ասելու, որ հայ քաղաքական մամուլի առաջնեկն իրականում «Արմենիա»-ն է:

¹⁰⁵ «Արմենիա»-ի յուշարար, Ա տարեկան 1885-86, Մարտեյ, 1890, էջ 35:

¹⁰⁶ «Արմենիա», թիվ 55, 1886:

Ավարտվեց «հաւատարիմ հպատակութեան» շրջանը, և նա փորձեց խզել կապը պետութեան հետ: Օսմանյան քաղաքացին տեղի տվեց ազգային գործիչին:

Փորթուզայանն իրատեսորեն հայ ազատագրական շարժումը բաժանել է երեք շրջանի՝ 1860-ականներից սկսված՝ Սահմանադրական, 1880-ականներից՝ Ինքնավարական և 1890-ականներից՝ Հեղափոխական¹⁰⁷: Առաջինում ծնված, երկրորդում՝ հասունացած և երրորդում իմաստնացած Փորթուզայանը ցավ էր ապրում, որ հայն ընտրել է պայքարի ամենապասիվ՝ գաղթի ճևր և այդ պայքարում բացառիկ դեր էր վերապահում հասարակ ժողովրդին, որից նրա դավանած ուսմունքն ստանում էր ընդգծված ժողովրդավարական, մարդասիրական բնույթ: Այս առումով նա մոտենում էր հայ ազատագրական պայքարի գաղափարական նախակարապետներ Նալբանդյանին, Խրիմյանին, Արծունուն, Բաֆֆուն ու Պատկանյանին:

Փորթուզայանն առանձնացնում էր մի քանի կարևոր գործոններ, որոնք կօգնեին հայ մարդուն կերտել ազատ Հայաստանի հիմքերը: Նախ՝ խորապես ճանաչել Հայաստանը, ապա՝ զնալ դեպի ժողովուրդը, ներկայացնել մարդկանց իրենց տխուր կացությունը, ցույց տալ մեղավորներին¹⁰⁸, հետո կազմակերպվել, զինվել և «քաղաքական յեղափոխութիւն յարուցանել Արմենիայի մէջ»¹⁰⁹:

XIX դարի 80-ական թթ. Մ. Փորթուզայանի հեղինակությունը շատ մեծ էր. նրա սաները Վանում հիմնեցին Արմենական կուսակցությունը, իսկ արտասահմանում ուսանող երիտասարդությունը հավաքվել էր «Արմենիա»-ի շուրջ: Սակայն դա երկար չտևեց, որովհետև, նա իր նկարագրով «յեղափոխական գաղափարների սերմնացան էր, բայց երբեք յեղափոխական գործիչ»¹¹⁰: 80-ական թթ. երկրորդ կեսից ասպարեզ իջած երիտասարդությունը համարելով, որ հեղափոխության գաղափարն արդեն մշակված էր, ուստի պետք էր այն փոխադրել արևմտահայ իրականություն, պատվաստել այնտեղ ու իրականացնել այդ հեղափոխությունը: Արմատական թևը (ապագա հնչակյանները) Փորթուզայանին առաջարկեց «հայ յեղափոխական կուսակցութիւն մը հիմնել»¹¹¹: Վերջինս հայտարարեց, «թէ ինք յեղափոխական չէ, այլ՝ խաղաղ առաջադիմական»¹¹² և հիմնեց «Հայաստանի Ջավակների Միությունը», որի նպատակն էր կարող ուժեր գոյացնել և հետո միայն հեղափոխության դրոշ պարզել: Վստահ չլինելով Հայաստանը զենքի ուժով ազատագրելու խնդրում Փորթուզայանը սպասողական դիրք էր զբաղվել, այդ պատճառով էլ չկարողացավ ժողովրդական զանգվածներին տանել իր հետևից:

Այդ տարիներին հայության մեջ խոսքն ավելի շատ էր, քան գործը: Շատերը կոչ էին անում համախմբվել, միասնաբար հակասուլթանական ճակատ ստեղծել, սակայն գործնականում անում էին հակառակը: Արդյունքում միջոցները

¹⁰⁷ Յետախաղաց շարժումը, «Արմենիա», թիվ 25, 1893:

¹⁰⁸ Այս թեզը շատ նման է ռուսական իրականության մեջ XIX դարավերջին մեծ տարածում գտած **ճարդոհիկական** շարժմանը: Չնայած երկար փնտրություններին մեզ չհաջողվեց գտնել դրանցում կապի կամ փոխազդեցության մասին որևէ վկայություն: Մնում է եզրակացնել, որ երկու երկրներում միաժամանակ և իրարից անկախ ծնվել են նույնանման գաղափարախոսություններ: Ավելացնենք, որ նմանատիպ դրսևորումներ նկատվել են նաև այլ ժողովուրդների ազատագրական մաքառումների ընթացքում:

¹⁰⁹ «Արմենիա»ի յուշարար, Ա տարեկան 1885-86, Մարտել, 1890, էջ 74:

¹¹⁰ «Արմենիա»ի յուշարար, Ա տարեկան 1885-86, Մարտել, 1890, էջ 157:

¹¹¹ **Տամատեան Մ.**, Իմ յուշերես, խմբագրեց եւ ծանօթագրեց Վաչէ Ղազարեան, Պէյրուս, 1985, էջ 28:

¹¹² **Տամատեան Մ.**, նշվ. աշխ., էջ 28:

փոշիանում էին, ուժերը՝ ջլատվում: Նոր սերունդն էլ, որ ջանում էր հաշտեցնել ազգային հարցն ու սոցիալիզմի վարդապետությունը, չէր կարող հանդուրժել չափավոր և զգուշավոր, վարչական ինքնավարության պահանջով և կցկտուր տնտեսական մոտեցումներով ներկայացող Մ. Փորթուզայանին: Նա իրենց համար այլևս ժամկետանց էր և, նույնիսկ՝ հետադեմ: Այդ հակասություններին և երկար տարիներ Չայաստանից հեռու լինելու ու այնտեղի փոփոխություններին ամտեղյակ լինելու պատճառով, 80-ական թթ. վերջերին Մ. Փորթուզայանն իր փոքրաթիվ համակիրների հետ գրեթե մենակ մնաց:

Երկրորդ ենթագլուխ - Արևմտյան Չայաստանի քաղաքական կարգավիճակի փոփոխության վերաբերյալ հայ ազգային կուսակցությունների դիրքորոշումների արտացոլումը պարբերականի էջերում:

Ի սկզբանե «Արմենիա»-ն բաց էր հայոց ճակատագրով մտահոգ գաղափարական բուրդ ուղղությունների առջև: Սակայն ազատության ուղիների վերաբերյալ քննարկումների ընթացքում ձևավորվեցին երեք հիմնական մոտեցումներ՝ ա) դիվանագիտական, բ) աստիճանական բարեփոխումների և գ) անհապաղ հեղափոխություն սկսելու: Ծայր առած բանավեճը տեղ գտավ «Արմենիա»-ի, իսկ հետագայում՝ «Չայաստան»¹¹³, «Հնչակ»¹¹⁴, «Հայք»¹¹⁵ և նրանց արբանյակներ համդիսացող այլ պարբերականների էջերում: Տարածայնությունները գնալով խորացան և վերածվեցին հակամարտության: Հիմնական պատճառն ազգի լինել-չլինելու հարցի պայմաններում նորեկների ազգային կարողությունները «ընկերվարական դատին ծառայեցնել»¹¹⁶ կոչերն էին:

Մ. Փորթուզայանը ժամանակավրեպ էր համարում «Հնչակ»-ի սոցիալիզմը, քանզի գտնում էր, որ Արևմտյան Չայաստանում գործարաններ ու բանվորներ չկային և ժողովուրդին դրանով «հեղափոխութեան գործել, դասակարգային պառակտումն առաջ բերել, տղայամտութիւն է»¹¹⁷: Փորթուզայանը նաև խոստովանում էր, որ նրանց շարքերում էլ իրենց ազգօգուտ գործերի համար մեծարանքի արժանի գործիչներ կան:

Ցավով արձանագրելով, որ հայ ազգը աղքատ է ու հետամնաց, ստրկական բնավորություն ունի, անգն է, թշնամիներով շրջապատված և «միաբանութիւն հաստատաւելն ալ դժուար»¹¹⁸, Մ. Փորթուզայանը նշում է նաև, որ երբ Չայաստանի անկախության նպատակներ հետապնդող շարժումն սկսվել էր, ո՛չ «Հնչակը» կար, ո՛չ «Դրօշակը», ո՛չ էլ նրանց ինտերնացիոնալիզմն ու սոցիալիզմը:

¹¹³ «Չայաստան»-ը Չայկական հայրենասիրաց ընկերության, ապա՝ Անգլիայի հայկական ընկերության երկաշաբաթերթն էր, լույս է տեսել 1888-1892 թթ., Լոնդոնում: Խմբագիր՝ Մ. Սըրվազյան:

¹¹⁴ «Հնչակ»՝ ՍԴ Հնչակյան կուսակցության կենտրոնական օրգան: Հիմնադիր՝ Ավ. Նազարբեկյան: Խմբագրություն Կենտրոնական վարչության: Լույս է տեսել ժմևում 1887-1891 թթ., Աթենքում 1892-1894, Փարիզում 1891, 1894, 1904-1915, Լոնդոնում 1894-1904, Փրովիդենսում 1935-1940 թթ.: (Տես, Չայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց Մ. Բաբլոյան, Ե., 1986), էջ 45:

¹¹⁵ «Չայկական միության» «Հայք» գրական և քաղաքական բերթի խմբագիրն էր Մ. Սմբատ Գաբրիելյան, (Տես Չայ պարբերական մամուլը մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց Մ. Բաբլոյան, Ե., 1986), էջ 47:

¹¹⁶ «Արմենիա», թիվ 53, 1894:

¹¹⁷ «Արմենիա», թիվ 43, 1893:

¹¹⁸ Մեր յոյսեր, «Արմենիա», թիվ 62, 1894:

«Արմենիա»-ն քննադատում էր նրանց, ովքեր «ուժասպառ էին դարձնում հայ ժողովուրդը»¹¹⁹ և փորձում ազատագրական շարժումներն օգտագործել իբրև կամուրջ «ընկերվարական» նպատակներին հասնելու համար. «ոչ ոք չի կրնար մասնակցել սոցիալական և դասակարգային կռիվներին, քանի ազգային դատը ավելի տազնապալի է և մեր ուժերը՝ երկու գործի համար անբավարար»¹²⁰:

Հակասելով իր նախկինում հայտնած տեսակետներին՝ Փոթուզայանը գրում էր, որ իրենք այն կարծիքին չեն, որ «կուսակցություն» բառը հոմանիշ է «անմիաբանության» և երբեք «հակառակ չեն եղած այդ գաղափարին, այլ նոյն իսկ անհրաժեշտութիւն մը կը համարեն զայն»¹²¹: Խոսելով ազգային կուսակցությունների մասին՝ նա գտնում էր, որ կուրորեն հետևելով հնչակյաններին շատ զոհեր տվեցինք, իսկ նույնը չի կարելի ասել դաշնակցականների մասին:

Երրորդ ենթագլուխ - «Արմենիա»-ի վերաբերմունքը մեծ տերությունների նկատմամբ:

Նկատենք, որ խնդրի վերաբերյալ «Արմենիա»-ի տեսակետները երբևէ չեն ուսումնասիրվել: Մեծ տերություններ ասելով թերթը նկատի ուներ Անգլիան, Օսմանյան ու Ռուսական կայսրությունները: Ներկայացնելով, որ XIX և XX դարերի սահմանագծին հայությունը բաժանված էր անգլիասերների և ռուսասերների¹²², թերթը տեղեկացնում էր, որ համեմատելիս ճնշող մեծամասնությունը ռուսամետ էր: Պատմական էքսկուրսներ կատարելով՝ թերթի վերլուծաբանները նշում էին, որ XVI դարի վերջերից հայ ժողովուրդը ռուսական կողմնորոշում էր որդեգրել, իսկ Ռուսաստանն այդ նվիրական ձգտումներն ի շահ իրեն էր օգտագործում: Վկայակոչելով 1894 թ. պաշտոնական տվյալները՝ Մ. Փոթուզայանը նշում էր, որ եթե Օսմանյան կայսրությունում հայերի թիվը գնալով նվազում է, ապա ռուսականում բնակվողներինը՝ ավելանում է¹²³: Հայոց եկեղեցու հողերի բռնագրավման վերաբերյալ ցարիզմի հայտնի ակտը խիստ զայրացրեց հայությանը և նա իր ձայնը բարձրացրեց ի պաշտպանություն եկեղեցու իրավունքների: Առաջին շարքերում գտնվող «Արմենիա»-ն ևս իր քննադատության նշանախեցը դարձրեց Ռուսաստանը: Առիթից օգտվելով անգլիասերները հարց բարձրացրին. «Միթե՞ տակաւին կարելի է Ռուսիայի վրայ յոյս դնել»¹²⁴: Ռուսասերները պատասխանեցին, որ Անգլիան բոլոր ժամանակներում, խոսելուց բացի, հօգուտ Հայկական հարցի որևէ քայլ չէր կատարել, մինչդեռ Ռուսաստանի «լախտը հաճախ է իջած թիւրքի գլխին»¹²⁵: Բեռլինի 61-րդ հողվածն էլ ռուսները նվիրեցին հայերին,-գրում էին նրանք,-և պետք չէ խեթ նայել նրանց, այլ հարկավոր է հնարավորինս օգտվել նրանց բարեհաճությունից:

Երբեմն «Արմենիա»-ն անդրադառնում էր նաև պարսկահայերի խնդրին և նրանց վիճակը համեմատում թուրքիայում և Ռուսաստանում բնակվող հայերի դրության հետ: Թերթի տեսաբանների կարծիքով պարսկահայությունը միակն էր, որ քաղաքական հալածանքների չէր ենթարկվում, բայց «տեղացի հասարակությունը չէ կրցած ըմբռնել իր այդ նպաստաւոր կացութիւն»¹²⁶ և օգուտներ քաղել

¹¹⁹ Նույն տեղում:

¹²⁰ **Տասնապետյան Հ.,** Հ.Յ. Դաշնակցութունը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհանուր ժողով (1890-1924), էջ 64:

¹²¹ Ազգային գաղափարական կուսակցութիւններ, «Արմենիա», թիվ 10, 1899:

¹²² Ռուսիա, Անգլիա եւ Հայաստան, «Արմենիա», թիվ 39, 1894:

¹²³ Նույն տեղում:

¹²⁴ Նույն տեղում:

¹²⁵ Ռուսիա, Անգլիա եւ Հայաստան, «Արմենիա», թիվ 39, 1894:

¹²⁶ Պարսկահայերի ապագան, «Արմենիա», թիվ 8, 1905:

դրանից: «Արմենիա»-ն կայսրությունների նկատմամբ այնքան էլ հստակ տեսակետներ չուներ և ժամանակի ընթացքում այս կամ այն պետության նկատմամբ թերթի վերաբերմունքը հաճախակի փոփոխվում էր:

ՔԼՈՒԽ V

«ԱՐՄԵՆԻԱ» ԹԵՐԹԸ 1908 Թ. ԵՐԻՏՁՈՒՐՔԱՎԱՆ ՅԵՂԱՇՈՒՄԻՑ ՅԵՏՈ

Առաջին ենթագլուխ - Յետսահմանադրական Թուրքիան և «Արմենիա»

թերթը:

«Արմենիա»-ի ներկայացմամբ հեղաշրջումից խանդավառված հայությունը հավատաց երիտթուրքերի խոստումներին և ցնծում էր. «գայլն ու գառը կըհամբուրվեին»¹²⁷: Իսկ **երկրի սոցիալ-տնտեսական վիճակը** շարունակում էր մնալ ծանր, հայերինը՝ օրհասական: Ազգայնամոլությունը պետական քաղաքականություն դարձրած երիտթուրքերը որդեգրեցին պանիսլամիզմի և պանթուրքիզմի ծրագրերը և սաստկացրին ազգային հալածանքները: Սուլթանական վարչակարգը գրեթե չվերափոխվեց: Յայերի «հույսերը քաղցր երազներ էին և հայասպան Յամիդի պատմունճանը ժառանգություն էր հասել թալեաթ-էնվերներին»¹²⁸: Ըստ թերթի՝ կայսրությունում մտքերի հեղաշրջում էր անհրաժեշտ, որն իսպառ բացակայում էր:

Շուտով հայերին համակեց խորը հիասթափություն, քանի որ երիտթուրքերն ավելի դաժան հակահայ քաղաքականություն էին վարում: Իշխանությունն ավազակի փոխարեն «կողոպտուող Յայը կպատժեր»¹²⁹: Քրդերը շարունակում էին անպատիժ մնալ և ավելի վտանգավոր դառնալ: Փորթուգալյանը ցավում իր երկրի թուլության համար, որի պատճառը կայսրության ժողովուրդներին հավասար իրավունքներ չտալն էր¹³⁰: «Արմենիան» գրում էր, որ 1908 թ. հեղաշրջմանն ու երիտթուրքերի մեղրածոր խոստումներին զաղութահայությունը ևս հավատաց, բայց նույնքան արագ էլ հիասթափվեց: Թերթն արձանագրեց՝ «խաբուրեցանք» և դրա զլխավոր պատճառ համարեց տգիտությունը, որը «մարդը դիրահաւան կը դարձունէ»¹³¹: Արտագաղթը սահմանադրության հռչակումից հետո էլ շարունակվեց, քանի որ, թերթի կարծիքով, երկրում ապահովություն չկար¹³²:

Երկրորդ ենթագլուխ - «Մեր գործը»:

«Արմենիայի» «Ոսկե դար» համարվող առաջին տասնամյակից հետո նրա գաղափարխոսությունը հետագայում մեծ փոփոխություններ չկրեց: Այն ավելի շատ արձագանքու էր ընթացիկ իրադարձություններին և տեսական նոր ուղղություններ չէր որդեգրում: Թերթը հայության վիճակի բարելավման ճանապարհ էր համարում նրա ցավերի մասին բարձրաձայնելը, անդադար աշխատելն ու կրթվելը: Մամուլն ազատության գաղափարը տարածելու կարևոր միջոց էր համարում և մշում էր, որ հետսահմանադրական շրջանում ևս «չափաւորութիւնը օգտակար է և ՓՐԿԱՆՔ, իսկ չափազանցութիւնը վնասակար և ՓՈՐՉԱՆՔ»¹³³: Ազգային խնդիրներում հաջողություններ արձանագրելու համար, «Արմենիա»-ն առաջարկում էր չկորցնելով չափի զգացումը՝ գործել զիջեր ու ցերեկ և որպես ղեկատունս առաջարկում էր կայուն հիմքերի վրա ազգային

¹²⁷ Երամյան Յ., մշվ. աշխ., էջ 92-93:

¹²⁸ Սարիադյան Ս., Կյանքիս Յուշերից, Երևան, 2007, էջ 32:

¹²⁹ Արմենիա, թիվ 46, 1912:

¹³⁰ Արմենիա, թիվ 28, 1912:

¹³¹ Նույն տեղում:

¹³² Արմենիա, թիվ 6, 1909:

¹³³ Արմենիա, թիվ 9, 1913:

միության ստեղծումը: Առաջարկում հեռու մնալ անձնական շարժառիթներից, անիշխանությունից, լինել զգույշ, բարձր պահել ցեղի ոգին, քանի որ կրքերը կտանեն անխուսափելի կործանման¹³⁴: Թերթը վտանգավոր էր համարում արևմտահայերի, արևելահայերի ու գաղթաշխարհի հայության միջև առաջացած խորթությունը, «իրարմէ անտեղանկ կացութիւնը»¹³⁵:

Հետեղեռնյան տարիներին թերթում երևացին ապագային վերաբերող հրապարակումներ, սակայն դրանք հիմնականում հուսալքված ժողովրդին ապրելու կոչ-հորդորներ էին¹³⁶: Հայաստանի խորհրդայնացումից հետո «Արմենիա» համարելով, որ հայության փրկության ուղին տվյալ պահին դա էր և արձանագրելով, որ «պիտի ապաւինինք դարձեալ յոյսին որ այսօր երևանը կը ներշնչէ: Հոն կայ խաղաղութիւն և կայ ուրեմն կարելիութիւն զօրանալու»¹³⁷, սկսեց հայացքն հառել դեպի նոր Հայաստան:

Զորորդ ենթագլուխ - «Բաց ու զոց»-ի խնդիրը:

Երիտթուրքերի հռչակած ազատությունը հայ երիտասարդության մի մասն ընկալեց բացարձակ իմաստով և փորձում էր եկեղեցիները դարձնել միտինգների հավաքատեղի, որին մյուս մասը դեմ էր: Այդ երկու բևեռների միջև Կ.Պոլսում ծայր առավ և գավառներում տարածվեց «բաց ու զոց»-ի խնդիր անունով մի անգիջում պայքար: Բացի կողմնակիցները հիմնականում արտասահմանում ուսանած դաշնակցական երիտասարությունն էր: Նրանց մի մասն անկեղծ մղումներով, իսկ ոմանք էլ՝ նորովի երևալու ձգտումներով, խախտում էին սովորույթի ուժով սրբազորված որոշ նորմեր: Այս հարցերը լայն քննարկման առարկա էին դարձել հայության շրջանում և մամուլում:

«Արմենիա»-ն փորձում էր հաշտեցնել կողմերին և հասարակությանը զերծ պահել ավելորդ լարվածությունից: Փորթուգալյանը գրում էր, որ իրենք չեն կարծում, թե «աշխարհականներին ատենախօսութիւնովը եկեղեցիները կը սրբապղծուին»¹³⁸, ապա ավելացնում՝ չի կարելի «որ մէկը յանդգնի եկեղեցիին բեմէն «ազատ սէր» քարոզէ»¹³⁹: Այնուհետև պարզաբանում է, որ «բաց ու զոցն» ընդամենը ամիթ էր կուսակցությունների համար միամիտ ժողովրդին խաբելու և իրենց կողմը գրավելու համար և կոչ էր անում հեռու մնալ դրանից:

Զորորդ ենթագլուխ - Հայկական հարցը և «Արմենիա»-ն

«Արմենիա» թերթը հետսահմանադրական շրջանում ևս մեծ տեղ էր հատկացնում կրկին օրախնդիր դարձած հայկական հարցին և իրադարձությունների զարգացմանը զուգընթաց տարբեր մոտեցումներ որդեգրելով՝ փորձում լուծումներ առաջարկել: Իսկ երբ հայկական բարենորոգումների ծրագիրը Ռուսաստանի պնդմամբ դրվեց շրջանառության մեջ, անզլո-ռուսական բավիղնե-րում տարուբերվելով թերթի տեսաբանների շրջանում ավելի գերակշռող դարձան ռուսամետ դիրքորոշումները:

Զգուշացնելով, որ հաճախ օտար գործիչների արտաբերած որևէ հայանպաստ արտահայտություն այնքան էր ոգևորում հայերին, որ հաճախ նրանք ցանկալին ընդունում էին իրականության փոխարեն, Փորթուգալյանը դիմում էր բոլորին և կոչ անում մարտասպարեզ մետվելուց առաջ խորությամբ ուսումնասիրել հարցը: Որպեսզի խուսափեն մեծաքանակ զոհեր տալուց, նա

¹³⁴ Արմենիա, թիվ 46, 1917:

¹³⁵ Արմենիա, թիվ 10, 1917:

¹³⁶ Արմենիա, թիվ 12 1922:

¹³⁷ Արմենիա, թիվ 23 1923:

¹³⁸ Արմենիա, թիվ 6, 1910:

¹³⁹ Նույն տեղում:

առաջարկում էր հայկական հարցի լուծման իր տարբերակը՝ Ռուսաստանի քաղաքականության դեմ որպես պատվար Օսմանյան կայսրության սահմաններում ստեղծել «ուկ Չայկական առանձնաշնորհեալ վարչութիւն»¹⁴⁰: Իսկ լոնդոնաբնակ գործիչ Կ. Չակոբյանն էլ կարծում էր, որ «ամէն ազգի ապագան իւր ափին մէջն է. նա կրնայ արիանալով բարգաւաճիլ և կրնայ ստրկանալ և կորսնցունել իւր հողերը յատկութիւնները»¹⁴¹ և առաջարկում ազգովին լուծել խնդիրը: Վերլուծաբան Չորիզոնն էլ հայկական խնդրի լուծման իր տարբերակն էր առաջարկում՝ ֆինանսական ճնշում գործադրել թուրքերի վրա և մեծ տեղութունների կամ որևէ առանձին պետության կողմից զինական քայլեր ձեռնարկել:

Չայկական հարցի արդարացի լուծման տեսակետից «Արմենիա»-ն մեծ հույսեր էր կապում Ազգային պատվիրակության հետ, պաշտպանում էր նրա դրույթները, տպագրում Պ. Նուբարի արտասանած ճառերը, նամակները, լուսաբանում նրա գործունեությունը: Իսկ Աշխարհամարտի նախօրյակին, հայկական հարցը բարենորոգումների տեսքով գրեթէ լուծված համարող «Արմենիա»-ն առաջարկում էր օգտվել ընձեռված հնարավորությունից, համախմբվել և նոր ուժերով շենացնել հայրենիքը:

Տեղասպանության ցավից մոլորված «Արմենիա»-ն մեծ դժվարությամբ վերագտնելով կորույթ՝ կրկին սկսեց անդրադառնալ Չայկական հարցին: Անորոշ, զուտ տեսական քննարկումներին աստիճանաբար փոխարինելու էին գալիս իրատեսական ու անգիջում իրապարակումներ: Թերթի ներկայացմամբ, երբ Աշխարհամարտն ավարտվեց, հայության համար հստակ էր, որ այլևս «ՅԱՅԱՍՏԱՆը, երբէք չպետք է որ նորէն թիւրքերի տիրապետութեան տակ դրուի»¹⁴²:

1917 թ. փետրվարին, ապա հոկտեմբերին տեղի ունեցած ռուսական երկու հեղափոխությունները շփոթի էին մատնել «Արմենիա»-ին: Հստակ չպատկերացնելով Չայկական հարցի նկատմամբ դրանց վերաբերմունքը՝ թերթը երբեմն հակասելով ինքն իրեն՝ լողում էր տարաբնույթ տեսակետների հորձանուտում: Իսկ երբ հռչակվեց ՅՅ Առաջին հանրապետությունը, Չայկական հարցը թերթի խմբագրականազմի համար պահպանելով իր հիմնական բովանդակությունը՝ զգալիորեն ձևափոխվեց: Նորանկախ Հանրապետությունն սկզբից ևեթ փորձեց դառնալ հարցի դրոշակակիրն ու առաքելություն ստանձնեց այն հասցնել իր վերջնական հանգրվանին, սակայն միմյանց հաջորդող ոչ բարենպաստ իրավիճակները խոչնդոտում էին և հարցը մտնում էր փակուղի: «Արմենիա»-ն երբեմն ոգևորվում, իսկ ավելի հաճախ հուսախաբություն էր ապրում: Ի վերջո, ելնելով հայության փրկության մեկնակետից, ողջունեց Չայաստանի խորհրդայնացումը՝ համարելով, որ Ռուսաստանի հովանու ներքո հնարավոր կլիներ պահպանել հայության մնացած փոքրաթիվ բեկորները¹⁴³:

Ենթազուլխ հինգերորդ - Չայոց մեծ եղեռնը և «Արմենիա» պարբերականը:

«Արմենիա»-ն ներկայացրել է եղեռնին նպաստող գործոնները, բացահայտել թուրք ազգի մարդասպան էությունը: Մեծ ի մասամբ օտարալեզու պարբերականներից արտատպումների և թարգմանությունների միջոցով թերթի տեսաբանները եղեռնը բնութագրել են որպես մեծագույն ողբերգություն: Թերթի ներկայացմամբ՝ զգալով մոտավուտ մայրամուտը՝ իշխանությունները երկիրը ոչ միայն վերածել էին ժողովուրդների սպանդանոցի, այլև, անթափանց պարսիպներով ինքնապատ-

¹⁴⁰ Արմենիա, թիվ 28, 1913:

¹⁴¹ Արմենիա, թիվ 46, 1913:

¹⁴² Նույն տեղում:

¹⁴³ Արմենիա, թիվ 23, 1921:

վել էին, որպեսզի համաշխարհային հանրությունը չտեղեկանար հայ, ասորի, հույն ժողովուրդների դեմ ուղղված իրենց ոճրագործությունների մասին:

Առանձնահատուկ է այն, որ, արդեն իսկ եղեռնի օրերին, հայերին ուժագրկելու և ոչնչացնելու երեք փուլ կարևորելով՝ թերթն իրատեսորեն ներկայացնում էր այն պատճառները, որոնք հանգեցրին ցեղասպանության: Դրանք էին. ա) եվրոպական տիրույթները կորցրած կայսրության համար, Բեռլինի վեհաժողովից հետո, արևելյան հատվածում դրված էր ուլ-ունի հարցը, բ) հայությունը միակ պատմեչն էր պանթուրքիզմի իրականացման ճանապարհին, գ) մեծ տերությունների երկդիմի պահվածքն ու թողտվությունը, դ) պատերազմով պայմանավորված՝ հարմար պահը, ե) «Թիլըքին ու Քիւրտին դէմ հայերու ինքնապաշտպանութեան միջոցներէ զուրկ գտնուիլը»¹⁴⁴, զ) հայ քաղաքական առաջնորդների անգործությունը, ինչը «կը նշանակէ ժողովուրդը էշ նահատակ դարձունելը»¹⁴⁵, է) թեև շատ փաստեր հետագայում միայն հայտնի դարձան, սակայն արդեն այդ շրջանում «Արմենիա»-ն խոսում էր գերմանացիների կողմից թուրքերին հովանավորելու մասին և Օսմանյան կայսրության «Գերմանիոյ կատուի մատն ու գործիքը ըլլալը»¹⁴⁶, ը) տեղահանության ոչնչով չպատճառաբանված լինելը, թ) ջարդարարների կողմից հարվածի սլաքը նախ և առաջ մտավորականության, ապա ԶՅԴ-ի և մյուս կարող ուժերի դեմ ուղղելը:

Եղեռնի մասին «Արմենիա»-ի միջոցով մեզ են հասել շատ հավաստի տեղեկություններ: Թերթը ժխտում էր այն հիմնազուրկ ստույգ, որ իբր հայերը հնազանդ մորթվել են և լուրեր է հաղորդում մի շարք գավառներում կազմակերպված ինքնապաշտպանական կռիվների մասին: «Արմենիա»-ն գրում է, որ առաջին հարվածից հետո ուշքի գալով հայերն ամենուրեք ինքնապաշտպանվեցին, սակայն հարվածն անսպասելի էր, իսկ ուժերը՝ խիստ անհավասար էին:

Թերթը հետագայում էլ էր ցեղասպանությանն անդրադառնում, բայց նախկին լալկան և օգնություն հայցող հողվածների կողքին երևում էին նաև վրեժի ու մեղավորներին պատժելու կոչեր: Աշխարհը նաև «Արմենիա»-ի շնորհիվ տեղեկացավ համամարդկային ողբերգության՝ եղեռնի մասին:

Ենթազուխ վեցերորդ - Կամավորական շարժումը և դրա արձագանքները «Արմենիա» պարբերականում

Հասկանալով, որ վստահելով երիտթուրքերին՝ անդառնալիորեն սխալվել էին, հայ քաղաքական ղեկավարները տեր կանգնեցին կամավորական շարժմանը: Գոյության երկու տարիների ընթացքում այն իր հորձանուտի մեջ ներառավ ամբողջ հայությանը: Շարժումը ղեկավարող Թիֆլիսի Հայկական ազգային բյուրոյի կամավորական շարժմանը սատարելու կոչին «Արմենիա»-ն անմիջապես արձագանքեց և ստեղծեց Մարսելի Մասնաժողովը¹⁴⁷ և կազմակերպեց դրամահավաք:

Թերթը նշում էր, որ այն արևմտահայության անվտանգության տեսակետից անարդյունավետ մարտավարություն էր և ազատագրական պայքարի կարևոր դրսևորում: Թերթի հողվածագրները կողմ էին շարժմանը, սակայն բանավիճում էին դրա նպատակների և արդյունքների շուրջ: Թերթում շատ են հրապարակումները հայաշատ երկրներից կամավորների ժամանման, դրան հանգանակելու և կամավորների բացառիկ քաջության մասին: Թերթի կարծիքով Հայկական հարցի լուծման համար ստեղծվել էր ամենահարմար պահը, քանի որ Ռուսաստանն ու

¹⁴⁴ Արմենիա, թիվ 23, 1921:

¹⁴⁵ Նույն տեղում:

¹⁴⁶ Նույն տեղում:

¹⁴⁷ Արմենիա, թիվ 20, 1914:

Անգլիան, որոնց հակասությունները միշտ խանգարում էին դրան, դաշնակիցներ էին դարձել: Սակայն հետագա իրադարձությունները հերթական անգամ հուսախաբ արեցին հայությանը: 1915 թ. դեկտեմբերին, զգուշանալով հայերի ինքնավարական ձգտումներից, ցարական հրամանատարությունը ցրեց կանաչավարական ջոկատները: «Արմենիա»-ի հեղինակները բարձր են գնահատել շարժումը, այն համարել իր տոկոսունությամբ և ապագայի նկատմամբ անսասան հավատով լի հայ մարդու սխրանք, հայկական ռազմական ուժի վերաստեղծիչ:

Ենթագլուխ յոթերորդ - «Արմենիա» թերթը կուսակցությունների ու նշանավոր այրերի մասին:

Գոյության բոլոր 38 տարիներին «Արմենիա»-ն կուսակցական պարտադրանքից զերծ մնաց և միշտ ընդգծեց, որ մասնավոր շահերը պետք է ստորադասվեն հայրենիքին: Երբեմն թերթը քննադատում էր կուսակցությունների գաղափարական սխալները, դրական վերաբերվում որևէ քաղաքական ուժի, սակայն, ավելի հաճախ հրապարակում էր սոցիալիզմի ժամանակավրեպ լինելու և ցուցադրական ելույթների վնասակարության մասին զգուշացնող նյութեր: Քննադատելով «ընկերվարական խնդրով հայ ժողովուրդը յուզող»¹⁴⁸ և երկրին անծանոթ «փրկիչներին»¹⁴⁹ թերթը շեշտում էր, որ վերջիններս հաշվի չէին առնում այն իրողությունը, որ Օսմանյան կայսրությունում ո՛չ կապիտալիզմ կար և ո՛չ էլ դրա գերեզմանափորը: Թերթը քանահարական բնութագրումներով ցույց էր տալիս, որ ռամկավարները թեև հաճախ էին հայտարարում, որ հանդուրժող են և նվիրված են ժողովրդի ցավերը դարմանելուն, սակայն լավագույն ուղին չեն ընտրել¹⁵⁰: Թերթն ավելի հանդուրժողական կեցվածք ուներ ԴՅԴ-ի նկատմամբ, որը երիտթուրքական հեղաշրջումից հետո փոխվեց համակրանքի: Իսկ ինչ վերաբերում էր իրենց «Դաշնակցական» կուսակցութեան հետևող» համարելուն, ապա թերթը ժխտում էր դա: Ընդգծեմք, որ Մ. Փորթուզալյանն ու նրա թիմակիցներն այնքան էլ անկեղծ չէին: Երբ թերթում ես «Արմենիա»-ն, ապա XX դարի սկզբներից զգալի է աստիճանական թեթումը դեպի Դաշնակցությունը: Հետագայում ևս՝ հատկապես սահմանադրության հռչակումից հետո շարունակվում էր համակրանքը ԴՅԴ-ի նկատմամբ: Թերթի խմբագրակազմը շատ էր ոգևորվում, երբ տեղեկանում էր կուսակցութունների համագործակցության մասին:

«Արմենիա»-ում շատ են կաթողիկոսներին, հայ գրականության, մշակույթի, ազատության պայքարի նվիրյալներին մասին հրապարակումները:

Ենթագլուխ ութերորդ - Հայաստանի Հանրապետությունը և «Արմենիա» պարբերականը:

«Արմենիա»-ն աշխարհամարտի վերջում Լ. Ջորջի «ՀԱՅԱՍՏԱՆը, երբեք չպետք է նորեն թիւրքերի տիրապետութեան տակ դրուի»¹⁵¹ հայտարարությունից ոգևորված և կարևոր դերակատարություն վերապահելով մտավորականությանը՝ գրում էր, որ հայ ժողովուրդը պիտի համախմբվի, օտարներին ներկայանա ոչ թե խեղճի ու անճարի, այլ ուժեղի կերպարով, որպեսզի կարողանա ապահովել իր վաղվա օրը՝:

Թերթը ողջունեց Հայաստանի անկախության հռչակումը և նրան սատարելու կոչով դիմեց համայն հայությանը: Սակայն Հայաստանի խորհրդայնացումը մի պահ շփոթեցրեց թերթի խմբագրակազմին և երկընտրանքի առջև կանգնեցրեց: Սակայն արագ կողմնորոշվելով՝ «Արմենիա»-ն հայտարարեց, որ «կը յարգե

¹⁴⁸ Արմենիա, թիվ 19, 1911:

¹⁴⁹ Արմենիա, թիվ 21, 1911:

¹⁵⁰ Արմենիա, թիվ 41, 1910:

¹⁵¹ Արմենիա, թիվ 23, 1918:

Հայաստանի արդի կառավարութիւնը»¹⁵², բայց զգուշացնում է բոլորին զգոն լինել, քանի որ «Պօլշէվիքները զուցէ տրամադիր լինին Հայաստանը վերադարձնելու թիրաբերին»¹⁵³: Հրճվելով այն մտքից, որ վերջապէս հայակործան գործընթացը կկանգնեցվի՝ «Արմենիա»-ն ի վերջո ողջունեց Խորհրդային Հայաստանը և շտապեց տեղեկացնել, որ Ռուսաստանը զորաբանակ է ուղարկել Հայաստանին պաշտպանելու նպատակով: Չմոռանալով նաև արձանագրել, որ խաղաղարար ներկայացող բոլշևիկները սկսել էին հալածել դաշնակցականներին¹⁵⁴:

Թերթի տեսաբանները խոստովանում էին, որ «որքան Եւրոպային կառչեցանք, մեր ժողովրդի բաղդը արագօրէն դարձաւ դէպի արևելք»¹⁵⁵: Որքան հետամուտ եղանք անկախ պետություն ունենալուն, այնքան անկախությունը պակասեց և անկախ Հայաստանին հաջորդեց կիսանկախ բոլշևիկյան Հայաստանը: Սակայն մի կողմում բոլշևիկյան Ռուսաստանն էր, մյուսում՝ եղեռնագործ Թուրքիան¹⁵⁶, հետևապէս, մշում էր թերթը, պետք չէր սարսափել, որ «Հայաստանը բոլշևիկ է և Ռուսաստանին միացած»¹⁵⁷: Ընդհանուր առմամբ, «Արմենիա»-ն հայոց պետականության վերականգնման և պահպանման համար պայքարում գրեթէ միշտ իրատեսական դիրքերում էր կանգնած:

Եզրակացությունների մեջ ի մի են բերված աշխատության հիմնական եզրահանգումներն ու արդյունքները.

1. XIX դարի վերջին քառորդին անտանելի հարկային բեռը, իրավազուրկ վիճակը, պաշտոնյաների կամայականություններն ու ավազակաբարո ցեղերի հարստահարությունները հայ մարդուն դարձրել էին անապահով ռայա: Նա ոչ իր ունեցվածքի, ոչ հողի, ոչ պատվի և, ոչ էլ նույնիսկ, սեփական կյանքի տերը չէր: Թերթի ներկայացմամբ՝ արևմտահայ ժողովուրդն այլևս անկարող էր այդ պայմաններում գոյատևել և փորձեց ելք որոնել: Սոցիալական բովանդակությամբ ընվզումներն աստիճանաբար հանգեցրին քաղաքական պահանջների՝ սկզբում ինքնավարության, ապա նաև անկախության բովանդակությամբ:

2. XIX դարի 80-ական թթ. կրթալուսավորչական գործի նվիրյալ և հայության վերագարթոնքի ռահվիրա Մ. Փորթուզալյանի կյանքն ու գործունեությունն առաջին անգամ է ամբողջությամբ ուսումնասիրվում: Գործիչ, ով իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրաբերեց կիրթ, խելացի, ազատատենչ, հայրենիքի ազատության համար մարտիրոսվելու պատրաստ սերունդ դաստիարակելու, սեփական ժողովրդին ազատ տեսնելու և ուժեղ հայրենիք ստեղծելու գաղափարի իրականացմանը:

3. Որոշ ազդեցություններով հանդերձ՝ Մ. Փորթուզալյանի գաղափարաբանությունը ամբողջովին արևմտահայ իրականության ծնունդ էր: Դրա օրինակով ներկայացվում է հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության զարգացման դիմամիկան և նրա կրող-զարգացնող սերունդների վերափոխության հետևյալ էվոլյուցիան՝ վանական վարժապետ-աշխարհիկ ուսուցիչ-հեղափոխության քարոզիչ-հեղափոխության գործուն դերակատար:

4. «Արմենիա» թերթի ամբողջական պատմությունն առաջին անգամ է ուսումնասիրության առարկա դարձել: Տույց է տրվել, որ չափավոր ազատական այդ թերթն իր գոյության տարիների հայ կյանքի տարեգիրն էր ու իրականության

¹⁵² Արմենիա, թիվ 16, 1921:

¹⁵³ Արմենիա, թիվ 24, 1917:

¹⁵⁴ Նույն տեղում:

¹⁵⁵ Արմենիա, թիվ 10, 1921:

¹⁵⁶ Նույն տեղում:

¹⁵⁷ Արմենիա, թիվ 23, 1918:

անեղծ հայելին: Թերթի կարևոր դերակատարություն է ունեցաել հայությանը դարավոր նիրհից դուրս բերելու, նրա ցավն աշխարհալուր դարձնելու և հայության բոլոր հատվածներին միմյանց կապելու կարևոր գործուն:

5. Հավաքվել, մեկտեղվել են աշխարհի տարբեր քաղաքներում պահպանված «Արմենիա»-ի բոլոր համարները, շրջանառության մեջ են դրվել նոր փաստեր ու տեղեկություններ թերթի սկզբնավորման մասին, ներկայացվել է թերթի պատմական առաքելության և որդեգրած գործելակերպի հիմնական ուղղությունների, օսմանյան բռնատիրության դեմ պայքարի մեթոդների ու ձևերի մասին «Շրջաբերական»-ը: Մեծ դժվարությամբ և նյութական զոհողությունների գնով Եվրոպայում հայատառ տպարան հիմնելը, թղթակցական ցանց ստեղծելը, գաղափարական տարբեր ուղղությունների պատկանող խմբերի աշխատանքները համակարգելը, հայության կյանքում կարևորագույն իրադարձություններին արձագանքելը լուրջ նվաճումներ էին:

6. Հիմնավոր քննության է ենթարկվել հայոց խնդիրը Եվրոպային պարզաբանելու և նրա օգնությանն ապավինելու ակնկալիքով «Արմենիա»-ի կազմակերպած քարոզարշավը: Թերթի հրապարակումները համեմատվել են արխիվային վավերագրերի և այլ աղբյուրների նյութերի հետ և ցույց տրվել, որ հայ ազատագրական պայքարը Եվրոպայից կախյալ համարելու ռազմավարությունն արդյունավետ չէր:

7. «Արմենիա»-ն դեռ եղեռնի տարիներին, տեղացուն բնորոշ հոտառությանը, հստակեցնում էր, որ այդ ոճիրը Հայկական հարցը թուրքավարի՝ ցեղասպանության միջոցով լուծելու օսմանյան իշխանությունների կամխակալ ծրագիր էր և անկախ այն հանգամանքից հայերը ցուցադրական ելույթներ կձեռնարկեին, թե ռուսական կողմնորոշում՝ այն կգործադրվեր:

8. Սկզբում «Արմենիան» փառաբանում էր երիթուրքական սահմանադրությունը, սակայն շատ արագ էլ հասկացավ, որ դա խաբկանք էր, հաշիշանման թմբիր՝ կայսրության տարածքում բնակվող հպատակ ժողովուրդներին ազատագրական պայքարից ետ պահելու և ցանկացած հարց իրենց ուզած ձևով լուծելու համար:

9. Հիմնադրման պահից սկսած Հայկական հարցը մշտապես եղել է «Արմենիա»-ի հիմնախնդիրներից: Թերթում իշխող են եղել հարցի լուծման տարբեր տեսակետներ: Սակայն, հայկական բարենորոգումների նախագիծը Ռուսաստանի պահանջով ընդունելուց հետո, գերիշխողը վերջինիս օգնությամբ և հովանավորությամբ հայկական ինքնավար կառույց ստեղծելու նտայնությունն էր: Թերթի հրապարակումներում այդ տեսակետը որոշ չափով երբաց ԶԶ Առաջին Հանրապետության տարիներին, իսկ Հայաստանի խորհրդայնացումից հետո, թերթը ոչ միայն արտահայտեց իր համակրանքը, այլև հայության փրկությունը տեսավ ի դեմս Ռուսաստանի հովանավորությամբ ստեղծված Խորհրդային Հայաստանի:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հետևյալ հրապարակումներում.

ա/ Մենագրություններ

1. Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921թթ.), Եր., Տիգրան Մեծ տպարան, 2009, 242 էջ:

2. 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2010, 120 էջ:

3. «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Եր., «Անտարես» հրատ., 2014, 680 էջ:

4. Периодическое издание „Армения,, у истоков армянской национально-освободительной идеологии,, (խմբագրված և լրացված տարբերակ), Институт Социальных Наук, Москва, 2015, 201 стр.

բ/ Հոդվածներ

1. Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն, Հայ ազգային ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914 թթ.), Եր., ԵԳԵԱ հրատ., 2003, էջ 110-130:

2. Միքայել Նաթանյանի և Փանոս Թերլեմեզյանի պատմագիտական հայեցակարգերը Արմենական կուսակցության և հայ ազատամարտի վերաբերյալ, «Պետություն, պատմություն, տնտեսություն, մշակույթ», Երևանի Գլաձոր համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի և ասպիրանտների չորրորդ գիտ. նստ. նյութ. ժողովածու, Եր., Գլաձոր համալսարան, 2009, էջ 171-183:

3. Սարգսյան Ա. Թ., Համբարյան Ա., Արմենական կուսակցություն / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Զանգակ-97, 2010, էջ էջ 482-491:

4. Սարգսյան Ա. Թ., Վանի 1895 թ. հերոսական ինքնապաշտպանությունը / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Զանգակ-97, 2010, 557-562:

5. Արմենական կուսակցության պատմության դասավանդման գիտամեթոդական առանձնահատկությունները ԲՈՒՀ-երում, «Հյուսիսավայլ» գիտ. հոդվ. ժող., Հյուսիսային համալսարանի հրատ., Եր., 2010, էջ 129-133:

6. Արամ Մանուկյանը Վանի 1915 թ. հերոսական ինքնապաշտպանության կազմակերպիչ և ղեկավար, Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (հոդվածների ժողովածու), Եր., ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2010, 18-25 էջեր:

7. Հնչակյան կուսակցության հիմնադրման պատմության հարցերի լուսաբանումն ըստ Խանազատի հուշերի, «Ակունք» գիտ. հոդ. ժող., թիվ 1, Եր., ԵՊՀ հրատ. (Իջևանի մասնաճյուղ), 2011, էջ 31-40:

8. Վաչե Ղազարյան՝ Արմենական կուսակցության պատմագիր, «Գլաձոր»-20 հոդվածների ժողովածու, Եր., 2011, էջ 507-526:

9. Վանի հերոսամարտը, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I, Վան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2013, էջ 163-170:

10. 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը Ա. Սապահ-Գյուլյանի գնահատմամբ, «Հայոց պատմության հարցեր» գիտ. հոդ. ժողովածու, Եր., 2011, թիվ 12, էջ 223-237:

11. 1885-1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարը Ա. Վարանդյանի գնահատմամբ, «Ակունք» ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, գիտ. հոդ. ժող., թիվ 1 (7), ԵՊՀ հրատ., Եր., 2013, էջ 7-23:

12. «Արմենիա» թերթի Շրջաբերականը, Նոր Գլաձորը գիտության բավիղներում (Երևանի Գլաձոր համալսարանի պրոֆեսորադասախոսական

կազմի և ասպիրանտների վեցերորդ գիտ. նստ. հոդ. ժող.), Եր, 2013, Նոյյան տապան, էջ 251-272:

13. Հայ իրականության և հանրային կյանքի թերություններն ըստ «Արմենիա» պարբերականի, «Ակունք» ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, գիտ. հոդ. ժող., թիվ 1(10), ԵՊՀ հրատ., Եր, 2014, էջ 15-33:

14. Հետսահմանադրական Թուրքիան և «Արմենիա» պարբերականը (Հայաստան. Ցեղասպանությունից վերածնունդ 1915-2015, Երևանի Գլաձոր համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների գեղասպանության 100-ամյա տարելիցին և Երևանի Գլաձոր համալսարանի հիմնադրման 25-ամյակին նվիրված յոթերորդ գիտ. նստ. հոդ. ժող.), «Նոյյան Տապան Հոլդինգ» հրատ., Եր., 2015, էջ 491-510:

15. Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության կազմավորումը, Լրաբեր հասարակական գիտությունների հանդես, թիվ 1 (583), Եր., 1992, էջ 35-48:

16. Վերակազմյալ հնչակյան մամուլի պատմությունից («Մարտ», «Նոր Կեանք»), Լրաբեր հասարակական գիտությունների հանդես, թիվ 2(590), Եր., 1995, էջ 107-115:

17. Արմենակ Եկարյանի պատմագիտական հայացքները, «Էջմիածին» Ս. Էջմիածին, մայիս, 2008, էջ 98-110:

18. 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը Արտակ Դարբինյանի գնահատմամբ, Լրաբեր հասարակական գիտությունների հանդես, թիվ 2 (622), Եր., 2008, էջ 46-57:

19. 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը Արսեն Կիտուրի գնահատմամբ, Լրաբեր հասարակական գիտությունների հանդես, թիվ 3 (626), Եր., 2009, էջ 3-19:

20. 1885-1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարը Հրանդ Գանգրունու գնահատմամբ, Լրաբեր հասարակական գիտությունների հանդես, թիվ 1-2 (630), Եր., 2011, էջ 3-20:

21. Հայկական հարցը և Հայ Սահմանադրական ռամկավարները, Հայագիտության հարցեր, ԵՊՀ հրատ., թիվ 2, Եր., 2014, էջ 67-82:

22. Հայ մամուլը 217 տարեկան, «Զարթոնք բացառիկ», Պեյրուօ, 2011, էջ 17-124:

23. Հայոց մեծ եղեռնի արտացոլումը «Արմենիա» պարբերականի էջերում 1885-1923 թթ., Լրաբեր հասարակական գիտությունների հանդես, թիվ 2, Եր., 2015, էջ 62-77:

24. Armenian periodical, the herald of national liberation struggle, Europe & Orient, N Janvier-Juin 2013, institute TCHOBANIAN, pages 75-81.

САРГСЯН СУРЕН ТАРХАНОВИЧ

МКРТИЧ ПОРТУГАЛЯН И ПЕРИОДИЧЕСКАЯ ГАЗЕТА «АРМЕНИЯ»

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 22-ого декабря 2015 г., в 14⁰⁰ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной академии наук РА (0019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

В 1877–1878 годах в результате русско–турецкой войны Османское правительство, лишаясь европейских территорий, всё своё внимание сосредоточил на восточную часть империи и усилил давление, направляя основную стрелку удара против армян. Больше неумев выдержать это давление, армянский народ стал на ноги, чтобы сбросить это невыносимое иго. В деле стимулирования пробуждения народа и разработки идеологии освободительной борьбы главную роль сыграл достойный представитель интеллигенции, М. Португальян.

Деятель, кто всю свою сознательную жизнь посвятил для воспитания молодого поколения и для поиска путей спасения западных армян. М. Португальян свою патриотическую деятельность начал 1880 – ых годах. На родине Константинополе он основал “Арагатский”, “Варздатский” и другие компании, активно сотрудничал с передовой прессой, редактировал газету “Масис” и из за светлого взгляда был преследован со стороны правительства. В Тбилисе встретился с Г. Арцруни и Раффи, а в дальнейшем благодаря их общения и сотрудничества, объединились освободительная мысль и борьба восточных и западных армян. По совету последних М. Португальян, переселившись в Ван, развёртывал плодотворную педагогическую деятельность, воспитывая отважное поколение, которое готов бороться. В то же время он стал первым сеятелем идеи создания партии “Арменакан” в армянской действительности.

Гирляндой деятельности М. Португальяна стала газета “Армения”, которая издалась в 1885г. в городе Марселе. М. Португальян был изгнан из страны и был лишён материальных средств, но он любой ценой со своими последователями смог 38 лет подряд выпустить в свет своего “приёмного сына - Армения”. Этот первенец политической прессы стал летописцем и чистом зеркалом армянской жизни и переводчиком социально – политической тяжолой жизни, армянской боли и страдания.

“Армения” был свободен от партийных и других принуждениях, не имел чёткое и твёрдое направление. В первое десятилетия издания, газета часто имела революционный подход, а в дальнейшем стала более осторожной и сдержанной. После, в газете встречаются призывы для образования переворота, но в основном она всегда осталась страницей освободительного и постепенного преобразования.

Но кроме основных периодических изданий, которых писал М. Португальян, “Армения” имела так же “Намакани”, “Армянский вопрос”, “Гахташхар”, “Теория прессы”, “Филологический”, “Реклама” и другие стойкие заголовки. Газета подняла

много вопросов, волнующих народу, особенно обильные оглашения о тяжелом социально – экономическом положении, о том, как бывают бесправными и о физическом необеспеченном положении.

В оглошениях “Армении” начертанны подходы Португальяна на счёт проблемы освобождения западных армян. М. Португальян как и С. Зарян ситуацию армян представлял двусмысленной. Он армянину считал турком по политики, а по искусству – армянином и старался примирить общегосударственный взгляд с национальным. Но в результате положений у него османский гражданин постепенно уступил национальному деятелю. В статьях газеты так же видно то преображение, которое происходило в течении национально – освободительной борьбы, в первом периоде которого монах – архимандрит уступил место неверующему учителю, во втором – труженик – учитель воспитательной работы стал редактором, а затем – революционным деятелем.

“Армения” отразил так же очень много других вопросов, которые волновали каждому армянину. Она уделила страницы критике идеологии партий, теневым сторонам деятельности, армянскому вопросу, добровольческому движению, геноциду, созданию большевистской Армении и много другим вопросам. Иногда проявил реалистический, здоровый, а иногда не чёткий подход. В месте со своими недостатками газета “Армения” в жизни армян - значительное явление. Но история газеты до с тех пор не была изучена и для восполнения этого пробела призванна это изучение.

SARGSYAN SUREN TARKHAN

MKRTICH PORTUGALYAN AND “ARMENIA” JOURNAL

Dissertation for the degree of the Doctor of Science (History) on the specialization of
“History Armenia” 07.00.01

The defense of the dissertation will be held on December 22, 2015, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Bagramyan Ave. 2/4).

SUMMARY

During the years of 1877-1878 as a result of Russian-Turkish war the Ottoman Empire losing its European territories began to focus on the eastern parts of the Empire by implementing repressors especially against Armenians. Not being able to stand the repressors any more Armenians decided to struggle. M. Portugalyan had a great role in development of the spirit of liberty.

He devoted all his life to educate the new generation and find ways to save the Western Armenians. He had started his patriotic activity since 1980s. In Polis which was his birthplace he founded the companies of 'Araratyan', 'Varazdatyan', etc. He also worked with progressive press of that time, edited 'Masis' journal and was pursued by authorities for having progressive points of view. He met G. Artsruni and Raffi in Tiflis. Later by meeting and cooperating with them more frequently both Eastern and Western Armenian ideas and struggle became one. Then by moving to Van M. Portugalyan began his Educational activities by bringing up a fearless generation ready to struggle. At the same time he became the founder of the first Armenakan Party.

The biggest activity of M. Portugalyan was 'Armeniatz' journal that he founded in 1885 in Marcel. Being outcaste from the country and having no money M. Portugalyan could publish 'Armenia' journal 38 years because of many sacrifices and a few followers. Being the first political journal it became the chronologist and the mirror of Armenian life, also the reflector of sociopolitical difficult life, Armenian pain and suffering.

"Armenia" was party free. It did not have defined political direction. During the first 10 years of publishing the journal had revolutionary direction but later it became more cautious. Later it also could be met in the journal calls for revolution, but it mainly remained limited liberal being a supporter of gradual changes.

Besides the editorial that contain the main parts that was written by M. Portugalyan. Armenia had also "Letters", "Armenian Issue", "Migrated World", "Press Forecast", "Philology", 'Advertisement' and other headlines. A lot of issues that regard Armenia could be met in the journal such as the difficult social and economical issues of Armenians, not having rights, not being protected etc.

In "Armenia" journal one can meet M. Portugalyan's points of views about the issue of the liberty of Western Armenians. He considered Armenians as politically Turkish but Armenians culturally and tried to make national and political meet. During the time because of some events, the Ottoman citizen inside of him gave up its position to national figure. In the articles it also can be seen his converting

which took place during the National Liberation Struggle where during the first period Monastery pedagogue converted to secular teacher. During the second period the teacher became editor, then revolutionary figure.

"Armenia" also discussed a lot of questions regarding Armenians, spoke about the ideas of party revealing its advantages and disadvantages. One also could find a lot of pages devoted to Armenian issues, Volunteer movement, Genocide, Declaration of Liberty, the creation of Bolshevik Armenia, etc. Even having shortcomings 'Armenia' journal had very significant role. The history of the journal was not studied entirely till now and this research was to fill that gap.